ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468
15022

ՈՒՐԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015Թ.
№ 22 (365)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

***Կախավաքերդի գլխին սարին բոլոր ամպ է նստում...***

*ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ*



Ձախից՝ Արա Հովսեփյանը

## ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ. «Կուզենայինք, որ բնակչությունն էլ՝ ոչ միայն Սյունիքում, այլեւ ամբողջ Հայաստանում, ըստ պատշաճի եւ որպես դրական երեւույթ ընկալեր մեր ընկերության մուտքը»

էջ 4

## ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Կոմբինատի ղեկավարության միակ նպատակն ամեն գնով առավելագույն շահույթ ստանալն է, ընդհուպ մինչեւ հանքավայրի պաշարների փոշիացման, շահագործման ժամկետի կրճատման հասնելը»

*Հանրարդյունաբերություն*

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, 2015թ. փետրվարի 19-ին «Սյունյաց երկիր» թերթի կայքում հրապարակված Կապանի լեռնահանքային կոմբինատի նախկին գլխավոր ճարտարագետ Սամվել Գասպարյանի՝ թերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանին հղած ռուսերեն նամակը՝ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ի ներկայիս տնօրեն Հրաչ Զաբրայանի գործունեությանն առնչվող, որ այնուհետեւ լույս է տեսել «Սյունյաց երկիր» թերթի 2015թ. փետրվարի 28-ի N6 (349) տպագիր տարբերակում, քաղաքացիական գործ հարուցելու հիմք է հանդիսացել՝ ընդդեմ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ի ու Սամվել Գասպարյանի՝ Հրաչ Զաբրայանից հրապարակայնորեն ներողություն խնդրելու եւ «Սյունյաց երկիր» թերթում դատավճիռը հրապարակելու, ինչպես եւ (համապարտության կարգով) հօգուտ Հրաչ Զաբրայանի մեկ մլն դրամ (իբրեւ փոխհատուցում) բռնագանձելու մասին:

Հրաչ Զաբրայանը կարծում է, որ վերոգրյալ հոդվածում ոտնահարվել են Հայցվորի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը (հայցադիմումի վերջին տարբերակը դատարան է ներկայացվել 2015թ. մարտի 17-ին):

Ըստ Հայցվորի՝ Սամվել Գասպարյանն ուղղակիորեն, իսկ «Սյունյաց աշխարհ» ՍՊԸ-ն անուղղակիորեն վիրավորել են Հրաչ Զաբրայանին:



Նամակի հեղինակ Սամվել Գասպարյանը ներկայումս բնակվում է Մոսկվայում եւ մասնավոր այցով Կապանում էր: Օգտվելով առիթից՝ զրուցեցինք Սամվել Գասպարյանի հետ հայցի եւ Կապանի հանքարդյունաբերության ոլորտում տիրող իրավիճակի մասին:

էջ 6

## Կրթության աշխատողների օգոստոսյան խորհրդակցությունը

**Օգոստոսի 24-ին Սյունիքի մարզկենտրոն Կապանում տեղի ունեցավ մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցություն, որը վարում էր մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Ավանդական դարձած ամենամյա խորհրդակցությունը յուրօրինակ հարթակ է՝ ներկայացնելու անցնող ուստարվա ձեռքբերումներն ու բացթողումները, փնտրելու ոլորտին առնչվող խնդիրների լուծման ուղիները:**

2014-15 ուստարում մարզի հանրակրթության ոլորտում իրականացված աշխատանքների, առկա խնդիրների եւ նոր ուսումնական տարվա անելիքների մասին խոսեց մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը: Նա նշեց, որ 2014-2015 ուստարին իր արդյունավետությամբ հիմք է տալիս բարձրաձայնելու, որ կրթական համակարգն աշխատել է բարձր պատասխանատվությամբ եւ արդյունավետորեն: Իր խոսքում Հ.Ալեքսանյանը կարեւորեց առաջադեմ եւ ստեղծագործ մանկավարժների բացահայտման, խրախուսման, զարգացման եւ բարեփոխումների գործընթացներում նրանց ներգրավվածության խնդիրը: Նա մասնավորապես նշեց մարզի դպրոցներում առկա որոշ մտահոգիչ հարցերի մասին, այն է՝ քառորդ դրույքով դասաժամ պարապելը, որոշ գյուղական դպրոցների ուսուցիչների տրանսպորտով ապահովումը, սահմանամերձ եւ թերի կոմպլեկտավորված դպրոցներում ուսուցիչների կարգի վերանայումը, մարզի 10-ից ավելի դպրոցներում մինչեւ 7 աշակերտի սովորելը:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեռնիկ Պետրոսյանը ներկայացրեց վերջին տարիներին մասնաճյուղի ձեռքբերումների, 2015-16 ուստարվա ընդունելության մասին: Այնուհանդերձ որպես կրթության ոլորտին քաջատեղյակ մարդ՝ նա իր մի քանի մտահոգությունները հայտնեց բնագավառում առկա խնդիրների վերաբերյալ:

Վերիշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Մատվեյ Ղազարյանը նշեց մի քանի կարեւորագույն նախադրյալներ, որոնց առկայության պայմաններում հնարավոր կլինի կազմակերպել որակյալ ուսուցում, այն է՝ դպրոցի՝ նորագույն պահանջներին համահունչ քայլելը, կրթության որակի բարելավմանը միտված ծրագրերը տեղայնացնելը, երեխաների կարողությունների ու հմտությունների հայտնաբերումը, դպրոցի կրթական գործունեության ներքին գնահատումը, ֆիզիկական դաստիարակությանը հետեւելը, երեխաների առողջության պահպանմանն ուղղված համապատասխան միջավայր ստեղծելը եւ այլն:

Սառնակունքի միջնակարգ դպրոցի տնօրեն Անուշավան Վարդանյանը ներկայացրեց դպրոցի 2014-15 ուստարվա ձեռքբերումները, խոսեց դպրոցում առկա թերությունների մասին, այն է՝ ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում առարկայական

էջ 2



# Կրթության աշխատողների օգոստոսյան խորհրդակցությունը

էջ 1

չափորոշիչներին համաձայն լիարժեք դաս անցկացնել, դժվարանում են կիրառել ուսուցման նոր մեթոդներ՝ տուրք տալով ավանդական մեթոդներին, դպրոցում մարզագույքի եւ լաբորատոր գույքի համալրման կարիք կա, ուսուցիչները ոչ լիարժեք դրույքային վճար են ստանում: Տնօրենը ներկայացրեց նաեւ առաջարկություններ ստեղծված որոշ խնդիրներ լուծելու համար:

Գորիսի պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանը խոսեց քոլեջի գործունեության եւ նրա առջեւ կանգնած հիմնախնդիրների մասին՝ մասնավորապես նշելով այն փաստը, որ տարիներ շարունակ «Քույրական գործ» եւ «Մանկաբարձական գործ» մասնագիտություններով կրթություն իրականացնող քոլեջն այսօր այդ հնարավորությունից զրկված է: Քոլեջի տնօրենը նշեց, որ դեպի քոլեջ տանող ճանապարհն անբարեկարգ վիճակում է, եւ եթե հնարավոր է, Սեւյան փողոցի սկզբնամասից մինչեւ քոլեջ ձգվող ճանապարհահատվածի հիմնանորոգումը մտցնել հրատապ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ ՀՀ կառավարության աշխատանքային ծրագրի մեջ՝ գոնե 2016 թվականի համար:

Ագարակի միջնակարգ դպրոցի տնօրեն Էռնա Բարխուդարյանը խոսեց դպրոցի ձեռքբերումների, առկա հիմնախնդիրների, այն է՝ ջեռուցման համակարգի բացակայության, շենքային պայմանների անբավարար լինելու մասին, բայց միեւնույն ժամանակ համոզմունք հայտնեց, որ դրանք էապես չեն անդրադառնա ուսման որակի վրա:

Սիսիանի ավագ դպրոցի տնօրեն Նաիրա Ներսիսյանը խոսեց դպրոցի գրանցած լուրջ հաջողությունների մասին, որ, ի դեպ, հանրապետությունում մարզի հպարտության գրավականներից է: Նա նշեց դպրոցի շրջանավարտների ձեռքբերումների, հիմնական դպրոցների հետ համագործակցության, համապատասխան մանկավարժական կադրերով, նյութատեխնիկական բազայով, լաբորատոր սարքավորումներով ապահովված լինելու մասին՝ միաժամանակ շեշտելով, որ որպես ավագ դպրոց, կարելի է ասել, արդեն կայացել են:

Եղեգի միջնակարգ դպրոցի տնօրեն Մերի Գանդալյանն իր ելույթում նշեց ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի առավելությունների մասին՝ հորդորելով դպրոցի տնօրեններին մասնակից դառնալ այս մեթոդով ուսուցման կազմակերպմանը մարզի տարածքում: Ի դեպ, մարզում միակ դպրոցն է, որ, ինչպես կրթության եւ գիտության փոխնախարար Մանուկ Մկրտչյանը նշեց, այդ առումով փորձարարական գործունեություն է ծավալում եւ հետագայում կարող է ուղենիշ լինել շատերի համար:

Փոխնախարարը, ամփոփելով ելույթները, փորձեց դրանցում նշված մտահոգություններին համընդհանուր պատասխաններ տալ: Նա նշեց, որ կողմնակից է համագործակցային ժողովրդավարությանը, որը մարդկության ապագան է, բայց առայժմ առաջատար երկրները նման փորձ չունեն: Փոխնախարարը խոսեց նաեւ 12-ամյա պարտադիր կրթության մասին, որ գործելու է՛ւ դպրոցում, է՛ւ քոլեջում, ինչպես նաեւ հորդորեց առավել մեծ ուշադրություն դարձնել ներառական կրթությանը:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն իր ամփոփիչ խոսքում նշեց, որ դպրոցը պետական ինքնության պահապանն ու ազգային ոգու ամրապնդողն է, եւ մեր այսօրվա գերագույն նպատակն է կրթել ու դաստիարակել ազգասեր, պետականամետ, գիտելիքներով հարուստ եւ մասնագիտական ճիշտ ճանապարհ ընտրող վաղվա քաղաքացիներ: Նա հորդորեց տնօրեններին առավել մեծ ուշադրություն դարձնել կրթության որակի բարձրացմանը, քանի որ դրա համար նախեւառաջ նրանք են պատասխանատու: Շնորհավորելով գալիք ուսումնական տարվա կապակցությամբ՝ նա մաղթեց արգասաբեր ու արդյունավետ ուսումնական տարի:

Մարզպետը կրթության եւ գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար ՀՀ ԿԳ նախարարի ոսկե հուշամեդալ հանձնեց Քաջարանի N1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Անահիտ Գրիգորյանին, իսկ Կապանի N2 ավագ դպրոցի տնօրենի տեղակալ, երկարամյա եւ փորձառու ուսուցչուհի Շողիկ Բադալյանին շնորհավորեց ՀՀ նախագահի կողմից՝ մատաղ սերնդի կրթության եւ դաստիարակության գործում ունեցած վաստակի համար վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչմանն արժանանալու առթիվ:

Ի դեպ, մարզում շարունակվում են դպրոցների կառուցման, վերանորոգման աշխատանքները: Ինչպես տեղեկացանք մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությունից, «Ասիական զարգացման բանկի» ծրագրի շրջանակներում Կապանի N7 (նոր կառուցվող) եւ N1, Գորիսի N6 եւ Սիսիանի N2 դպրոցներում կկատարվեն վերանորոգման աշխատանքներ, իսկ 2016թ. պետբյուջեի տրամադրած միջոցներով՝ Սիսիանի N1, Մեղրու N1 եւ Կապանի N6 դպրոցներում՝ վերանորոգման աշխատանքներ եւ Ագարակի միջնակարգ դպրոցի նոր ուսումնական մասնաշենքի կառուցում:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Աշխատանքային շրջայց հարավարեւմտյան սահմանագոտի

Օգոստոսի 19-20-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն աշխատանքային այցով եղել է հանրապետության հարավարեւմտյան սահմանագոտում:

Աշխատանքային այցի նպատակն էր դիտարկել Հանրապետության հարավարեւմտյան շրջանում տեղակայված զորամասերի սոցիալ-կենցաղային պայմանները, հետեւել նոր կառուցվող եւ նորոգվող օբյեկտների, շենքերի ընթացիկ շինարարական աշխատանքներին, սահմանագոտու տվյալ հատվածի օպերատիվ իրավիճակին, ինչպես նաեւ ծանոթանալ նախորդ այցերի ժամանակ տրված ցուցումների եւ հանձնարարականների կատարման ընթացքին:

Այցի առաջին օրը մարտական հենակետերում նախարարը հետեւել է ամրաշինական կառույցների ինժեներական բարելավման ու կահավորման աշխատանքներին: Սեյրան Օհանյանը զրուցել է մարտական հերթապահություն իրականացնող զինանձնակազմի հետ, ծանոթացել նրանց մարտավարամասնագիտական պատրաստությանը:

Բանակային զորամիավորման ղեկավար կազմի հետ ճշգրտվել են առաջիկա անելիքներն ու ծառայության կազմակերպմանն առնչվող մի շարք հարցեր: Առաջադրվել են որոշակի խնդիրներ, տրվել են ցուցումներ եւ հանձնարարականներ՝ ընթացող աշխատանքներն ըստ սահմանված ժամանակացույցի իրականացնելու համար:

Բնակարաններով ապահովելու գործընթացի շրջանակում՝ աշխատանքային այցի երկրորդ օրը Սյունիքի մարզի Ագարակ քաղաքում պաշտպանության նախարարը մասնակցել է սպաների եւ նրանց ընտանիքների համար կառուցված հերթական բնակելի շենքի բացման հանդիսավոր արարողությանը:

Շնորհավորելով զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին՝ Սեյրան Օհանյանն անձամբ է նրանց հանձնել բնակարանների բանալիներն ու վկայագրերը: Պաշտպանական գերատեսչության ղեկավարը հավաստիացրել է, որ զինծառայողների համար շինարարական արդի չափանիշներին համապատասխանող բնակարանային պայմանների ապահովումը մշտապես գտնվում է պետության հոգածության ներքո, եւ ամեն ինչ արվում է, որ ծանրաբեռնված օրակարգից հետո լարվածությունն ու հոգնածությունը թոթափելու համար յուրաքանչյուր սպա ունենա իր ջերմ անկյունը:

**2015-08-20, mil.am**

# Ընտրվել է Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նոր նախագահ

**Հուլիսի 29-ին Գորիսի Ա.Օրդյանի անվան շախմատի դպրոցում տեղի ունեցավ Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի արտահերթ նիստը, որին մասնակցում էր ֆեդերացիայի 15 անդամից 10-ը:**



Բավարարեց Մաքսիմ Հակոբյանի խնդրանքը՝ մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահի պարտականություններից իրեն ազատելու մասին:

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, ճանաչված գրոսմայստեր Սմբատ Լպուտյանը շնորհակալություն հայտնեցին Մաքսիմ Հակոբյանին՝ ֆեդերացիայի նախագահի պաշտոնը տարիներ շարունակ հաջողությամբ վարելու համար:

Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի նոր նախագահ ընտրվեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության վարչական տնօրեն Վահե Հակոբյանը, ով ֆեդերացիայի անդամներին եւ ֆեդերացիայի արտահերթ նիստի մասնակիցներին շնորհակալություն հայտնեց վստահության համար եւ հավաստիացրեց, որ իրենից կախված ամեն ինչ կանի շախմատը Սյունիքի մարզում էլ ավելի զարգացնելու համար:

Այնուհետեւ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն Սյունիքի մարզում շախմատի դրվածքի եւ դրա հետագա մասսայականացման շուրջ:

Սյունիքի մարզի շախմատի ֆեդերացիայի արտահերթ նիստին մասնակցում էին նաեւ Կապանի, Գորիսի, Մեղրու եւ Ագարակի քաղաքային համայնքների ղեկավարներ Աշոտ Հայրապետյանը, Վաչագան Ադունցը, Արշավիր Հովհաննիսյանը եւ Մխիթար Զաքարյանը:

**Սեփ. լրատվություն**

# ՀՀ մշակույթի նախարարը եւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահը՝ Սյունիքում

**Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը Սյունիքի մարզում էին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը:**

Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի ուղեկցությամբ նրանք այցելել են Սիսիանի Զ.Խաչատրյանի եւ Ա.Հովսեփյանի տուն-թանգարան, Սիսիանի քաղաքային գրադարան եւ գեղարվեստի դպրոց, Որոտնավանք ու «Զորաց քարեր» հնագույն մեգալիթյան համալիր: Այնուհետեւ Հ.Պողոսյանն ու Ա.Սաթյանը ժամանել են Գորիս, որտեղ նրանց ընդունել են Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն ու Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը: Նրանց զրույցը շարունակվել է Ակսել Բակունցի տուն-թանգարանում, որի ընթացքում քննարկվել են Սյունիքի մարզի մշակութային կյանքի մի շարք հրատապ հարցեր:



Սեպտեմբերի 1-ին ՀՀ մշակույթի նախարարն ու կոմպոզիտորների միության նախագահն այցելել են Տեղ գյուղ, համայնքի թիվ 1 դպրոցում մասնակցել Գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը, եղել գյուղի Սուրբ Գեւորգ եկեղեցում:

Սեպտեմբերի 1-ին նրանք Տեղ գյուղից մեկնել են Ստեփանակերտ՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված համերգին՝ մասնակցությամբ Լ.Կազարնովսկայայի:

**Սեփ. լրատվություն**

# Վավերագրական ֆիլմ՝ Սերո Խանզադյանի մասին

Հանրային հեռուստատեսության նախաձեռնությամբ նկարահանվում է վավերագրական ֆիլմ 20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակի նահապետ Սերո Խանզադյանի մասին:

Սցենարի հեղինակը Մարիաննա Փայտյանն է, օպերատորը՝ Կարեն Թորոսյանը:

Մինչեւ 30 րոպե տեւողությամբ ֆիլմի նկարահանման աշխատանքներն ավարտվել ս.թ. սեպտեմբերի 1-ին, որից հետո սկսվել է մոնտաժը:

Ֆիլմը Հ1-ով կցուցադրվի 2015թ. դեկտեմբերի 3-ին՝ Սերո Խանզադյանի ծննդյան 100-ամյակի օրը:

«Սյունյաց երկիրը» հաջողություն է ցանկանում ֆիլմի ստեղծագործական անձնակազմին եւ հույս հայտնում, որ շուտով կունենանք Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ Սերո Խանզադյանի մասին բարձրարժեք ֆիլմ:

Օգոստոսի 6-8-ը նկարահանումներ էին կատարվում գրողի ծննդավայրում՝ Գորիսում:

**Սեփ. լրատվություն**

*Հիշատակի խոսք*

# Նա առաջնորդ մնաց նաեւ ազգային զարթոնքի օրերին



**2015թ. օգոստոսի 15-ին Գորիսում տարածվեց բոլորիս վիշտ պատճառող գույժը. վախճանվել է հայտնի պետական, հասարակական գործիչ, անվանի սյունեցի Ռոբերտ Ալեքսանյանը:**

Մի քանի օր առաջ էին վատթարացած առողջական վիճակում տեղափոխել Երեւան` փորձելով երկարաձգել կյանքը, սակայն ապարդյուն...

Վերջին ամիսներին ճաք էր տվել նրա առողջությունը: Հարազատներն ամեն ինչ արել էին (նաեւ արտերկրի հռչակավոր հիվանդանոցներ տանելով)` ապաքինելու, ի հայտ եկած հիվանդությունը բուժելու կամ գոնե ինչ-որ չափով մեղմելու համար: Եվ թվում էր, թե դա հաջողվել է, մանավանդ որ մինչեւ վերջ ոգեպինդ էր` վրահաս հիվանդությանը հաղթելու վճռականությամբ: Սակայն մահն այս դեպքում եւս ամենազոր գտնվեց:

Եվ հիմա ստիպված ենք նրա մասին խոսել անցյալ ժամանակով ու ափսոսանքով, քանի որ ապրելու ժամանակ ուներ դեռ, քանի որ մեր ընթացքը նրա փորձով եւ իմաստնությամբ զորացնելու, նրա` մեզ հետ լինելու կարիքն ունեինք դեռ:

Ռոբերտ Ալեքսանյանի կյանքի 77 տարին, իսկապես, լի է հիշարժան գործերով, որոնք ոչ միայն իր կենսագրության առանցքն են, այլեւ Սյունիքի նորագույն պատմության անկապտելի մասը:

Ինքն իր կենսագրության ամենապատասխանատու եւ բարդ շրջանը համարում էր Արցախի ազատագրական շարժման տարիները: Եվ մենք` նրա գործընկերներն ու ժամանակակիցները, ականատես ենք եղել նրա նվիրական գործունեությանը:

Գորիսի դիրքն այնպիսին է, որ շրջանը հայտնվել էր սահմանային բախումների կիզակետում: Ինքնապաշտպանության ջոկատներ էին ձեւավորվում, եւ գործընթացն ուղղորդել էր պետք: Չնայած դեռեւս գոյատեւող Խորհրդային Միությանը եւ իշխանությունների ճնշումներին` Ռոբերտ Ալեքսանյանը կարողացավ սկզբնական փուլում իր ձեռքը վերցնել ինքնապաշտպանական շարժման ղեկը:

Ինքն էր ասում հարցազրույցներից մեկում. *«Իմ պաշտոնը թույլ չէր տալիս նման հարցերով զբաղվել, բայց արդեն ամեն ինչ երկրորդ պլան մղվեց, մենք պետք է երկիր պահեինք, ժողովուրդ պահեինք: 100 կմ-ից ավել սահման կար Ադրբեջանի հետ, ու պարտավոր էինք պայքարի մեջ ներքաշվել` անկախ ամեն ինչից: Մեր հանրապետության սահմանների ու ժողովրդի անվտանգությունն առաջնային էր»* («Սյունյաց երկիր», N17, 2008թ.):

Արցախյան պատերազմում Ռոբերտ Ալեքսանյանի ունեցած դերակատարությանը շատ զորահրամանատարներ են անդրադարձել: Նրանցից մեկի` գեներալ-մայոր Գրիգոր Գրիգորյանի խոսքը, ով 1990-91թթ. եղել է արտակարգ դրության Գորիսի շրջանի պարետ, կուզենայինք հիշել: *«Անգնահատելի էր Ռոբերտ Ալեքսանյանի դերը շրջանի ուժերը, միջոցները մոբիլիզացնելու եւ կարճ ժամանակամիջոցում պարետային ծառայությունը (Գորիսում արտակարգ դրություն էր հայտարարվել 1990թ. հունվարի 15-ին, ինչպես եւ Լեռնային Ղարաբաղին հարակից մյուս շրջաններում) կազմակերպելու եւ, մասնավորապես, շրջան գործուղված զինվորական ստորաբաժանումները տեղափոխելու, 15 պահակակետ կազմակերպելու միջոցով սահմանը հսկողության տակ առնելու գործում: Գտնվելով սերտ համագործակցության մեջ պարետային ծառայության եւ շրջան գործուղված զինվորական ստորաբաժանումների հետ, հաճախ էր լինում կրակագծում, ակտիվ մասնակցություն էր ունենում կողմերի բանակցային գործընթացին: Բավական է հիշել Խոզնավար, Տեղ, Կորնիձոր, Շուռնուխ գյուղերում տեղի ունեցած իրադարձությունները: Նրան հաճախ կարելի էր տեսնել սահմանամերձ բնակավայրերում, որտեղ հանդիպում էր բնակիչների հետ եւ վստահություն ներշնչում: Նշանակալից էր նրա դերը «Կյանքի ճանապարհի» գործունեության ապահովման, Լեռնային Ղարաբաղից բռնագաղթածներին (Տեղի եւ Խնձորեսկի ուղղությամբ) ընդունելու եւ տեղավորելու գործում: Նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Գորիսի պաշտպանության հիմնադրամը»* (После долгого пути, Ереван, 2012г., ст. 102):

Ռոբերտ Ալեքսանյանի կենսագրության մեջ կա մի դրվագ, որ լեռնային գյուղերի մերօրյա հոգեվարքի համապատկերի վրա, մեր խորին համոզմամբ, ուղղակի առասպելական է թվում: Նկատի ունենք հայ-ադրբեջանական սահմանագլխին Նոր Խնձորեսկի հիմնադրումը: 1980-ականներին ծնունդ առած այդ գյուղը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ռազմավարական մեծ նշանակություն ունեցավ տարածաշրջանի համար: Եվ այդ ամենը` Արցախյան պատերազմից տարիներ առաջ: Ասել է թե` Գորիսի սահմանի ամրապնդումը հեռատեսորեն կարեւորել էր մինչեւ պատերազմը: Ինչպես ինքն էր ասում` *«Նոր Խնձորեսկն օգնեց, որ կարողանանք նաեւ վերեւի գյուղերի անվտանգությունն ապահովել»* («Սյունյաց երկիր», նշված համարում):

Ռոբերտ Ալեքսանյանը մեծ ավանդ ունեցավ Գորիսի քաղաքաշինության, այդ ոլորտում զանգեզուրյան ավանդական ճարտարապետության զարգացման գործում:

Միայն 1985 թվականին Գորիսում կառուցվեց 22,5 հազար քառակուսի մետր բնակելի մակերես:

Նրա նախաձեռնությամբ զարկ տրվեց անհատական բնակարանաշինությանը:

Անսահման երեւակայության տեր եւ պրպտող մտքով այդ անձնավորությունը քարերի լեզվով, ճարտարապետական բարձրաճաշակ լուծումներով անընդհատ ինչ-որ բան էր ասում:

Նրա նախաձեռնությամբ էր, որ Գորիսի կենտրոնական զբոսայգում կանգնեցվեցին 19-րդ դարավերջին եւ 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն առաջնորդած հերոսների հուշարձանները:

Նրա նախաձեռնությամբ կառուցվեցին Արցախ-Սյունիք բարեկամությունը խորհրդանշող կամարը, Գորիսի նախկին ինքնատիպ մուտքը:

Մի «թուլություն» էլ ուներ` աղբյուրաշինություն. իր նախաձեռնությամբ Գորիսում եւ մերձակայքում կառուցեց բազում աղբյուրներ, որոնցից ոչ մեկը մյուսին չէր կրկնում:

Հատկապես կուսակցության շրջկոմի 1-ին քարտուղարի պաշտոնում (1982-91թթ.) Ռոբերտ Ալեքսանյանն աչքի ընկավ մշակույթի հանդեպ ընդգծված հոգատար վերաբերմունքով:

Նրա նախաձեռնությամբ վերաբացվեց Գորիսի պետական թատրոնը:

Նա հեղինակ դարձավ մի քանի մշակութային ավանդույթների, որոնց մի մասը մինչեւ օրս էլ կենսունակ է Գորիսում` Բակունցյան օրեր, Զանգեզուրյան ձմեռ, Բերքի տոն, Գորիսյան տոն, Երգի-պարի տոն…

Երաժշտական դպրոցներ հիմնադրվեցին Շինուհայրում, Խնձորեսկում:

Նրա աջակցությամբ Գորիսի ժողգործիքների ժողովրդական համույթը մասնակցեց Մերձբալթիկայում անցկացվող միջազգային փառատոնին:

Լայն հնարավորություններ ընձեռվեցին ստեղծագործող մտավորականության համար:

Տասնամյակների դադարից հետո` 1988-89 թվականներին, Աստծո վեհաշուք տաճար Տաթեւի վանք կենտրոնով, վերաբացվեց Սյունյաց հնավանդ թեմը: Եվ, որքան էլ տարօրինակ էր այդ օրերի համար, կուսշրջկոմը ոչ թե հակառակվեց այդ ձեռնարկումին, այլ ընդառաջեց իր կարելիությունների չափով:

Համագորիսյան գրեթե բոլոր միջոցառումներին այդ ժամանակ ներկա էին մեր նահապետները` Սերո Խանզադյանն ու Գուսան Աշոտը, Համո Սահյանը, որոնց հետ առանձնահատուկ բարեկամական հարաբերությունների մեջ էր Ռոբերտ Ալեքսանյանը:

Գորիսը, իիրավի, յուրահատուկ առանցք էր դարձել սյունիքյան ծագումով (եւ ոչ միայն) մեծերի համար, եւ քաղաքում նրանց հաճախակի երեւալը միանգամայն նոր մթնոլորտ էր ձեւավորել:

Սերո Խանզադյանի հուշերի գրքում` «Ինչպես հիշում եմ» վերտառությամբ, հանդիպում ենք մեծն Վիլյամ Սարոյանի խոսքին` Ռոբերտ Ալեքսանյանի մասին (էջ 367):

Վիլյամ Սարոյանը Կապանում բացատրություն է տալիս Սերո Խանզադյանին, թե ինչու նախորդ օրը չմնաց Գորիսում. *«Երեկ հո չնեղացա՞ր, որ քուկիդ բարեկամներին լքեցի: Հիվանդ էի: Հիվանդ էի: Բայց շատ սիրեցի ձերոնց: Կըսես` ներողություն իմ կողմե: Լա՞վ: Այն Ռոբերտ ինչ անուշ տղա էր` Ռոբերտ Ալեքսանյան: Դե, հիմա կուզիս երթանք Գորիս: Շաբաթ մը մնամ այնտեղ»:*

Դա 1978 թվականի հոկտեմբեր ամսին էր:

Կարեն Դեմիրճյանն էլ, անդրադառնալով Ռոբերտ Ալեքսանյանին կուսակցության Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար ընտրելու փաստին, 1982թ. հարյուրավոր մարդկանց ներկայությամբ Գորիսի կենտրոնական զբոսայգում պատկերավոր խոսքով ընդհանրացում արեց. *«Խուփը գլորավ` գտավ կճուճը»:*

Գուսան Աշոտը եւս ողջունեց Ռոբերտ Ալեքսանյանի ընտրությունը եւ ընծայագրի տեսքով իր մաղթանքը հղեց ու սպասելիքներն արտահայտեց.

*Գորիսը մի նոր խինդ առավ,*
*Անես երկնի շափաղ դառավ,*
*Ձեռքն արարող լույս կբերի,*
*Հոգուն վառվող սիրով վարար:*
*25.05.82թ.*

*Լեռների պես կանգուն մնաս,*
*Սերունդների ճամփով գնաս,*
*Փառքի ճամփան դու վայելես,*
*Լույս զանգերի ղողանջ դառնաս:*

**20.12.85թ.**

1989թ. ապրիլի 27-ին Գորիսի Մխիթար Սպարապետի անվան հրապարակում ելույթ ունեցան Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն, ովքեր դրվատանքի խոսքեր ուղղեցին Ռոբերտ Ալեքսանյանին: Ըստ նրանց` Ռոբերտ Ալեքսանյանը կոմունիստների այն փաղանգից էր, ովքեր, կոմկուսի մեջ լինելով հանդերձ, հավատարիմ մնացին հայոց ազգային արժեքներին եւ արթուն պահեցին մեր ազգային մտածելակերպը:

Ի դեպ, իր ստացած բոլոր պարգեւների մեջ («Պատվո նշան» շքանշան, «Մայրական երախտագիտության» մեդալ, ԼՂՀ 60-ամյակի կապակցությամբ հուշամեդալ, Հունան Ավետիսյանի անվան մեդալ, «Անբասիր աշխատանքի համար» մեդալ, «ՀՀ զինված ուժերի 20 տարի» հոբելյանական մեդալ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրեր… ) Ռոբերտ Ալեքսանյանն առանձնակի զգացումով էր վերաբերվում երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի նվիրած ժամացույցին:

Ռոբերտ Ալեքսանյանն այն սերնդի ներկայացուցիչն էր, ով հայտնվել էր հին եւ նոր դարաշրջանների սահմանագծում: Պատմական այդ ջրբաժանում նրա համար կողմնորոշիչը, ինչպես ժամանակը ցույց տվեց, ազգային շահն էր, ժամանակի մարտահրավերներին դիմակայելը:

Անցել էր խորհրդային դպրոցը, բարձրացել կուսակցական աստիճաններով, բայց… Պետք էր ծառայել երկրին` նոր Հայաստանին: Եվ շարունակեց պաշտոնավարել նաեւ Հայաստանի անկախացումից հետո` չորս տարի (1991-95թթ.) լինելով Գորիսի շրջխորհրդի նախագահ: Անցյալի դրականը պահպանելու եւ նորին ընդառաջ գնալու վճռականությամբ, իր գիտելիքներով ու փորձով լծվեց Հայաստանի 3-րդ հանրապետության կառուցմանը:

Կոմունիստական կուսակցությունից հետո այլ կուսակցության չանդամագրվեց, թեեւ անդամագրվելու առաջարկ ստացավ գրեթե բոլոր քաղաքական ուժերից: Եվ, ինչպես ասում էր, *«Ո՞նց պիտի մարդկանց աչքերին նայեմ... Երեկ կոմունիստ էի, դա այլեւս չկա, վերջացավ... Ուրեմն պիտի մնայի անկուսակցական եւ ծառայեի երկրին»* («Սյունյաց երկիր», նշված համարում):

Անցած ուղու եւս մի քանի դրվագ, որ հարկ ենք համարում հիշել:

Ծնվել է 1938թ. հունիսի 5-ին Գորիս քաղաքում: Ավարտել է տեղի Ակսել Բակունցի անվան միջն. դպրոցը, Երեւանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը եւ կոմունիստական կուսակցության կենտկոմին կից Մոսկվայի բարձրագույն դպրոցը:

1961-64թթ. եղել է Տաթեւէկի շինարարության ավագ ինժեներ, 1964-68թթ. եղել է Գորիսի գարեջրի գործարանի գլխավոր ինժեներ, 1968-73 թվականներին` Գորիսի քաղսովետի գործկոմի շիննորոգման գրասենյակի պետ, 1973-74 թվականներին` Գորիսի ռետինե կոշիկների ֆաբրիկայի տնօրեն, 1974-82 թվականներին` կուսակցության Գորիսի շրջկոմի քարտուղար:

Եղել է ՀԽՍՀ 11-րդ գումարման եւ ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

Ռոբերտ Ալեքսանյանը զավակն էր անվանի գորիսեցի Արմենակ Խաչատրյանի եւ ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչուհի Աշխեն Շահնազարյանի:

Արմենակ Խաչատրյանը մոտ քսան տարի (1943-63թթ.) Գորիսի, ապա եւ Սյունիք-Զանգեզուրի հասարակական-քաղաքական կյանքում նշանակալից դեր խաղացած անձնավորություն էր, հանրապետության տվյալ ժամանակաշրջանի երեւելի դեմքերից մեկը:

Այդ գերդաստանի մեծահարգ զավակն էր նաեւ Հովհաննես Խաչատրյանը` Հայրենական մեծ պատերազմի պարտիզանական ջոկատներից մեկի լեգենդար կոմիսար Մանուչը, ով հետագայում դարձավ մի շարք վավերագրական եւ գեղարվեստական գործերի հերոսը, ով իր տեղն ունեցավ ԽՍՀՄ մի քանի հանրագիտարաններում, ով դարձավ Բելառուսի պատվավոր քաղաքացի եւ մնաց այդ հանրապետության երախտավորներից ու առայսօր հիշվող գործիչներից մեկը:

Ռոբերտ Ալեքսանյանի մահվան կապակցությամբ կրկին մեր վիշտն ու ափսոսանքն ենք հայտնում: Նաեւ մեր ցավակցությունը` նրա հարազատներին, մերձավորներին եւ հատկապես տիկին Հրանուշ Քարամյանին, ում հետ Ռոբերտ Ալեքսանյանը կազմեց օրինակելի ընտանիք, ունեցան չորս զավակ:

Այս պահի համար ասված խոսք ենք հղում նրանց` մխիթարվեք Սուրբ հոգով. երեւի դա է սփոփվելու միակ ճանապարհը:

Մեր երկրամասում հանգուցյալի թողած հետքը` միտված գալիքին, նույնպես մխիթարանք է նրա հարազատների ու մերձավորների համար: Իսկ այդ հետքը, որ մեր աչքի առաջ է, կմնա երախտապարտ գորիսեցիների հիշողության մեջ ու պատշաճ տեղ կգտնի Սյունյաց աշխարհի նորագույն շրջանի պատմության մեջ:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**17 օգոստոսի 2015թ.**

# ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ. «Կուզենայինք, որ բնակչությունն էլ՝ ոչ միայն Սյունիքում, այլեւ ամբողջ Հայաստանում, ըստ պատշաճի եւ որպես դրական երեւույթ ընկալեր մեր ընկերության մուտքը»

էջ 1

ՀՀ կառավարությունում 2015թ. հունիսի 8-ին ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության, «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր», «Քոնթուր Գլոբալ հիդրոկասկադ», «Քոնթուր Գլոբալ տերրա հոլդինգս» եւ «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգ քամփնի» ընկերությունների միջեւ:

Ստորեւ ներկայացնում ենք մեր զրույցը Քոնթուր Գլոբալ ընկերության Հայաստանում գլխավոր ներկայացուցիչ Արա Հովսեփյանի հետ:

**– Պարոն Հովսեփյան, նախ մեր ընթերցողներին հետաքրքրում է, թե ովքե՞ր են «Որոտանի հէկերի համակարգի» նոր սեփականատերերը:**

– Սեփականատերն ամերիկյան Քոնթուր Գլոբալ ընկերությունն է, դինամիկ զարգացող մի կազմակերպություն, որի հիմնադրման օրվանից (2003 թվական) հետաքրքրության ոլորտն էներգետիկան է եւ այդ թվականից սկսած աշխարհի զարգացող ու զարգացած տարբեր երկրներում ներդրումներ է կատարում, հիմնականում գնում, կառուցում, վերազինում եւ շահագործում է էներգիա արտադրող օբյեկտներ, ջերմային էլեկտրակայաններ, հիդրոէլեկտրակայաններ, արեւային եւ հողմային էներգիա արտադրող կայաններ՝ այսինքն համարյա ամեն տեսակի, բացի ատոմակայաններից:

**– Արդյո՞ք Որոտանի հէկերի համակարգի ամբողջ գույքը հանձնվեց նոր սեփականատիրոջը: Որքանով տեղյակ ենք, Հերհերի հէկը մնացել է նախկին կարգավիճակում. նաեւ ձեզ չեն փոխանցվել դեբիտորական ու կրեդիտորական պարտքերը, ինչպես նաեւ պարտավորությունները:**

– Ճիշտ է, Հերհերի հէկը մեր սեփականությունը չէ, չի անցել մեր տնօրինությանը, բայց մնացած ամբողջ սեփականությունը մենք ենք տնօրինում, այսինքն՝ երեք հիդրոէլեկտրակայան՝ Սպանդարյանի, Շամբի, Տաթեւի, չորս ջրամբար՝ կառուցապատման իրավունքով, եւ Խոտ գյուղի վարչական շրջանում գտնվող Տաթեւիէկի օրվա կարգավորման ջրամբարը, բոլոր թունելները՝ բաց եւ ճնշումային: Հիդրոտեխնիկական կառույցները անցել մեր սեփականություն 99 տարով՝ կառուցապատման իրավունքով, ինչպես եւ նախատեսված է օրենսդրությամբ: Մնացած շենքերը նույնպես՝ դրանցում տեղակայված մեքենասարքավորումներով եւ մյուս գույքով, Քոնթուր Գլոբալի սեփականությունն են՝ առանց որեւէ ժամկետային սահմանափակման:

**– Եվ պարտքերը՝ դեբիտորական, կրեդիտորական, ինչպես նաեւ պարտավորությունները ձեզ չե՞ն փոխանցվել:**

– Մենք գնել ենք գույքը, այլ ոչ թե բաժնետոմսեր, որով կարող են դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը կարգավորվել: Գույքը գնել ենք համաձայն գույքագրման արդյունքների, այսինքն այնտեղ դրվել է այն ամենը, ինչ որ եղել է «Որոտանի հէկերի համալիր» ՓԲ ընկերությունում:

**– Եվ, այդուհանդերձ, կարելի՞ է ասել, որ Որոտանի հէկերի համակարգը զուգահեռաբար շարունակելու է գործել:**

– Շարունակում է: Որոտանի հէկերի համակարգը վաճառողն էր, Քոնթուր Գլոբալը՝ գնորդը: «Որոտանը» վաճառել է իր գույքի մեծ մասը, բայց մնացած մասով ինքը գործում է, մասնավորապես, Հերհերիէկով, եւ համաձայն մեր միջեւ պայմանագրի դեռ առնվազն 3 տարի պետք է շարունակի գործել որպես իրավաբանական անձ:

**– Մոտավորապես ե՞րբ անցաք ձեր պարտականություններին:**

– Հունիսի 8-ին ստորագրվել է «Որոտան հէկերի համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիրը, հուլիսի 30-ին գործարքը փակեցինք, այսինքն՝ այդ ժամանակահատվածում պայմանագրով նախատեսված բոլոր նախապայմանները ե՛ւ կառավարությունը, ե՛ւ մենք կատարեցինք ու պարտավորված գումարը վճարեցինք: Ավելի ստույգ՝ վճարվեց վաճառքի գումարի կեսը, մյուս կեսը՝ 12 ամիս հետո, այն է՝ նախատեսված 180 միլիոնի կեսը վճարված է, մյուս մասը մինչեւ 2016 թվականի հուլիսի 30-ը կվճարենք:

**– Ինչպիսի՞ տեխնիկական վիճակում են Քոնթուր Գլոբալին փոխանցվել հէկերը, ջրամբարները, թունելները, մյուս կառույցները:**

– Նորմալ, աշխատող վիճակում ենք ստացել: Ի դեպ, դա պայմանագրով էլ է նախատեսված, որ կառավարությունը՝ որպես «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության 100 տոկոս բաժնետեր, եւ «Որոտան հէկերի համալիրը» պարտավորվում են գույքը մեզ հանձնել աշխատող, նորմալ վիճակում: Մինչ այսօր դեռեւս խնդիր չի ծագել:

**– Պարոն Հովսեփյան, կառավարման նախկին կառուցվածքը պահպանվո՞ւմ է, թե՞ այդ ուղղությամբ եւս փոփոխություններ են արվում: Դուք, օրինակ, Քոնթուր Գլոբալ ընկերության գլխավոր ներկայացուցիչ եք, մի՞թե նոր կառույցը գլխավոր տնօրեն չի ունենալու:**

– Երեւի տեղյակ եք, որ ընկերության առքուվաճառքի գործարքը երկար տեւեց:

Նման մեծ գործարքները, սովորաբար, մանրակրկիտ, մանրամասն ուսումնասիրվում են եւ ամրագրվում առքուվաճառքի պայմանագրով, հարակից փաստաթղթերով, որպեսզի հետագայում խնդիրներ չծագեն: Քննարկվող խնդիրներից մեկն ընկերության կառուցվածքն էր, աշխատակազմը, մարդկային ռեսուրսների հետ կապված հանգամանքները: Մենք համաձայնեցինք ընկերությունն ընդունել իր մարդկային ռեսուրսներով: Մեզ աջակցող մարդկային ռեսուրսներ կառավարող ընկերության հետ՝ Կասկադ Քոնսալթանտս, ձեռնարկեցինք մի թեթեւ գործընթաց մարդկանց հետ զրուցելու՝ պարզելու՝ արդյո՞ք նրանք ուզում են շարունակել իրենց գործունեությունն ընկերությունում, այնուհետեւ համարյա բոլորին ընդունեցինք աշխատանքի:

*Ծնվել է 1974 թվականին, ավարտել է Երեւանի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը, այնուհետեւ ամերիկյան համալսարանը՝ քաղաքագիտության մագիստրոսի աստիճանով: Ապա ուսումը շարունակել է Մեծ Բրիտանիայում՝ Օքսֆորդի համալսարանի Էքսեթեր քոլեջում՝ դիվանագիտություն մասնագիտությամբ: Աշխատանքային գործունեությունը սկսել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունում, այնուհետեւ տեղափոխվել է Մեծ Բրիտանիայի դեսպանատուն՝ որպես միջազգային զարգացման ծրագրերի ղեկավար, որից հետո եղել է «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրի գլխավոր գործադիր տնօրեն: Ծրագիրն ավարտվելուց հետո տեղափոխվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագիր՝ նույնպես որպես գործադիր տնօրեն: 2013 թվականի սեպտեմբերից Քոնթուր Գլոբալ ընկերության ներկայացուցիչն է Հայաստանում, վերջին երկու տարում հիմնականում զբաղվել է գործարքի բանակցային հարցերով: Ամուսնացած է, ունի երկու երեխա:*

Այս պահին ունենք 199 աշխատակից, այսինքն այն մարդիկ, ովքեր ստացել եւ ընդունել են առաջարկը, եւ նրանց հետ պայմանագիր է ստորագրվել: Նախկին ընկերության համարյա ամբողջ անձնակազմը մնացել եւ աշխատում է: Կառուցվածքի առումով դեռ ոչ մի փոփոխություն չի կատարվել: Իհարկե, եղածին ավելացել է ընկերության երեւանյան գրասենյակը: Ճիշտ է, նախկինում էլ է եղել երեւանյան գրասենյակ, բայց այն լիովին տարբերվում է իր գործառույթներով եւ նշանակությամբ այն ներկայացուցչությունից, որը կունենանք այժմ: Մեր նոր գրասենյակը Երևանում հիմնականում կատարելու է ֆինանսական բնույթի ծառայություններ, նաեւ ներկայացուցչական խնդիրներ լուծելու նպատակ է ունենալու, օրինակ, կառավարության հետ, կարգավորող հանձնաժողովի, ընդհանրապես էներգետիկայի ոլորտում եղած այլ գործընկերների հետ ավելի սերտ աշխատանք,եւ այլն: Այդ առումով ինքս, որպես ընկերության գլխավոր ներկայացուցիչ, երեւանյան գրասենյակի ղեկավարն եմ, այս պահին ընկերության ներկայացուցիչն եմ բոլոր մակարդակներում, բացի արտադրությունից: Արտադրության գծով Գորիսում տնօրեն կա, նախկինում այդ բնագավառում աշխատած փորձառու անձնավորություն է, ով տարբեր տեղերում եղել է նման եւ ավելի խոշոր ընկերության ղեկավար: Ունենք նաեւ գլխավոր ֆինանսական տնօրեն, որը շուտով կժամանի Հայաստան: Որպես ամերիկյան ժամանակակից ընկերություն՝ բոլոր այդ գործառույթներն իրարից անկախ են գործում, սակայն դրանց կո-որդինացման բավականին խիստ եւ էֆեկտիվ համակարգ կա, ի տարբերություն նախկինում եղած բավականին հիերարխիկ, կենտրոնացված համակարգի:

**– Հավանաբար հասցրել եք ծանոթանալ ինժեներատեխնիկական կազմին, մասնագետներին առհասարակ: Կարո՞ղ եք գնահատական տալ կադրային ներուժին:**

– Ճիշտն ասած, ես նոր մարդ եմ այս ոլորտում եւ, բնականաբար, չեմ կարող առանձին բնութագրում տալ, բայց իմ կարծիքով ընկերության կադրերը փորձառու են, այսօրվա դրությամբ ընկերությունը մեզ հանձնվել է, այսպես ասած՝ աշխատող վիճակում, ինչը նաեւ վկայում է կադրային ներուժի մասին:

**– Անկեղծ ասած՝ մարդկանց մեջ մտահոգություն կա, որ կարող են մեկ տարի հետո աշխատուժի կրճատումներ լինել: Առայժմ, որքանով տեղյակ ենք, երկու հոգի է կրճատվել:**

– Կոնկրետ չեմ ուզում կենտրոնանալ աշխատողներին աշխատանքից ազատելու կամ չազատելու հարցի վրա: Այս պահին նման խնդիր դրված չէ: Բայց գաղտնիք չէ, եւ պիտի կրկնենք միգուցե, որ ընկերությունը, ինչպես ընդունված է իր մյուս նման ծրագրերում, պիտի իրականացնի վերակառուցում, ավելի պարզեցնի աշխատանքի կազմակերպման սխեման, նաեւ վերանայի համակարգի կառուցվածքը եւ կադրերը՝ ինչպես են գործելու, ով ինչի համար է պատասխանատու լինելու: Դա մենք չենք թաքցնում, եւ դրանից պետք չէ վախենալ: Լավ մասնագետը միշտ իր տեղը գտնելու է, պարզապես պիտի ձգտել մեր ընկերությունում ընդունված բարձր չափանիշներով աշխատել: Դա վերաբերում է ոչ միայն կադրային ներուժի վերադասավորմանը, այլ նաեւ առանձին մասնագետների զարգացմանը: Հատուկ ուզում եմ նշել, որ մտադիր ենք ընկերության արտադրության մեջ, առաջիկա տարիների ընթացքում, երիտասարդ կադրեր ներգրավել: Որովհետեւ ընկերությունը, ըստ պայմանագրի, այսօրվա դրությամբ ունի 25 տարվա համաձայնեցված սակագնային պլան, եւ մենք պատրաստվում ենք երկարաժամկետ գործունեության: Ընդհանրապես, Քոնթուր Գլոբալը հայտնի է նրանով, որ ինքը հետեւողականորեն ընդլայնում է իր գործունեության շրջանակը, մինչեւ այսօր գրեթե ոչ մի կառույց չի վաճառել: Ուստի ցանկանում ենք երիտասարդ կադրեր ընդգրկել ընկերության աշխատանքներում, ովքեր նաեւ կզարգանան եւ կուսուցանվեն մեր կողմից աշխատանքի ընթացքում: Լավ կլինի, որ նոր կադրերը պարտադիր տիրապետեն օտար լեզուների, ասենք, անգլերենին, այլ երկրների իրենց գործընկերների հետ հաղորդակցվելու ավելի լայն հնարավորություն ունենալու նպատակով:

**– Առքուվաճառքի պայմանագրի առիթով լրատվական բոլոր թողարկումներում խոսք է եղել ներդրումների, առկա հիդրոսարքավորումների, միջոցների արդիականացման վերաբերյալ: Արդյո՞ք դա նշանակում է, որ հիդրոսարքավորումները, կայանները արդիականացման խնդրի առաջ են կանգնած:**

– Մեր պայմանավորվածություններից մեկն է՝ առաջիկա վեց տարում իրականացնել տեխնիկական վերազինման ծրագիր, որն այս պահին թարմացման կարիք ունի: Բայց դա հենվելու է այն ծրագրի վրա, որ կառավարությունում ժամանակին գերմանական KfW հիմնադրամի միջոցով պատրաստվել է: Պարզապես, կրկնում եմ, վերազինման այդ ծրագիրը թարմացման կարիք ունի:

**– Արդյո՞ք դա նշանակում է, որ ներդրումներ անելուն զուգընթաց կբարձրանա ընկերության կողմից արտադրվող էլէներգիայի գինը, արդյո՞ք կփոխվի ինքնարժեքը:**

– Արտադրության արդյունավետությունը կբարձրանա, մեքենասարքավորումների կյանքը կերկարի, կայանն ավելի անվտանգ, հուսալի վիճակում կլինի: Ինչ վերաբերում է էլէներգիայի գնին, ապա դա կարգավորվում է եւ շարունակելու է կարգավորվել ընդհանուր օրենքների դաշտում: :

**– Իսկ էլէներգիայի արտադրության ծավալները կպահպանվե՞ն, թե՞ կմեծանան:**

– Հնարավոր է, որ մեծանան, մի քիչ վաղ է խոսել այդ մասին:

**– Եվ դա հանրապետությունում արտադրվող էլէներգիայի (կամ հիդրոէներգիայի) ո՞ր մասն է կազմում:**

– Որոտանի հէկերի համակարգը կազմված է երեք էլեկտրակայանից (Սպանդարյանի, Շամբի եւ Տաթեւի) եւ դրանց հզորությունը կազմում է հանրապետությունում գեներացվող հզորության մոտ 15 տոկոսը:

**– Եվս մի կարեւոր հարց. Որոտանի հէկերի համակարգը Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջանների ամենախոշոր գործատուն է, բացի այդ՝ սոցիալական ծրագրեր է իրականացրել տարիներ շարունակ: Մարդկանց հետաքրքրում է՝ որպես խոշոր ընկերություն, տնտեսվարող սուբյեկտ՝ Գորիսում, նաեւ Սիսիանում կիրականացնե՞ք սոցիալական ծրագրեր:**

– Անշուշտ: Քոնթուր Գլոբալ ընկերությունն աշխարհի բոլոր երկրներում, եւ Հայաստանը բացառություն չէ, հանդես է գալիս «լավ քաղաքացու» իմիջով: Դա նշանակում է, որ այնտեղ, որտեղ աշխատում ենք, ամեն ինչ պիտի լինի անվտանգ, հուսալի, մարդիկ պիտի գոհ լինեն, եւ ոչ միայն ընկերությունում աշխատող մարդիկ: Ամեն տեղ Քոնթուր Գլոբալը հետամուտ է լինում իրականացնել այդ տարածաշրջանին պատշաճող սոցիալական զարգացման ծրագրեր: Երկու կարծիք չի կարող լինել, որ նման ծրագրեր իրականացնելու ենք:

**– Հասցրե՞լ եք ծանոթանալ տեղական իշխանությունների պատասխանատուների հետ, համագործակցության ուղիներ ուրվագծել:**

– Դեռ նոր ենք սկսում գործել, իհարկե, հասցրել ենք, հանդիպել ենք ե՛ւ Սյունիքի մարզպետի, ե՛ւ Գորիսի քաղաքապետի հետ, տարածաշրջանում որոշ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների հետ: Բայց դեռ ժամանակ ունենք, մինչեւ տարեվերջ ուզում ենք մոտիկից ծանոթանալ, որ հստակ իմանանք, թե կոնկրետ ինչ ենք ուզում անել եւ որ ոլորտում պիտի ներդրում անենք սոցիալական ծրագրերի առումով:

**– Ինչպիսի՞ քաղաքականություն եք ենթադրում իրականացնել հանրության հետ կապերի հարցում, հրապարակայնության, աշխատանքի թափանցիկության առումով:**

– Գործելու ենք բացարձակ թափանցիկ, պատրաստ ենք պատասխանել յուրաքանչյուր հարցի, ոչ մի բան չունենք թաքցնելու, այսինքն՝ պատրաստվում ենք

# ՄԵՐԻ ԳԱՆԴԱԼՅԱՆ.
# «Դպրոցի հիմնական խնդիրը տարեցտարի աշակերտների թվի նվազումն է»



### Հանրակրթություն

1989 թվականից Եղեգի միջնակարգ դպրոցը գործում է որպես հայկական դպրոց: 2010-2011 ուստարվանից դասապրոցեսն անց է կացվում նորակառույց շենքում: Քաղաքից 28կմ հեռավորության վրա գտնվող գյուղական դպրոցը եղել ու մնում է Եղեգի հոգեւոր, մշակութային, մարզական միակ կենտրոնը: Աշխատանքին անմնացորդ նվիրված մարդը միայն կարող է ամեն օր անցնել այդ քարքարոտ եւ փոշոտ, դարուփոսերով ճանապարհն ու զբաղվել սերունդների դաստիարակության չափազանց պատասխանատու գործով:

Դպրոցում 2014-15 ուստարում սովորել է 30 աշակերտ, որից երեքը՝ շրջանավարտ: Ի դեպ, նրանք բոլորն էլ ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություն: 2011թ. հունվարի 12-ից տնօրենի պաշտոնակատար է նշանակվել Մերի Գանդալյանը, իսկ նույն տարվա նոյեմբերի 8-ին՝ ընտրվել տնօրեն: **«Իմ պաշտոնավարման ընթացքում եղել է ուստարի, որ ունեցել ենք 41 աշակերտ: Իրականում դպրոցի ամենամեծ խնդիրը, ինչպես գրեթե բոլոր գյուղական համայնքներում, պայմանավորված է գյուղում երիտասարդ ընտանիքների պակասով, երբեմն նույնիսկ բացակայությամբ,** – նշեց Մերի Գանդալյանը եւ հավելեց, – **2015-16 ուստարում առաջին դասարան չի լինի, բայց կլինի երրորդ դասարան, որ անցած ուստարում չկար»:** Տնօրենի տեղեկացմամբ՝ ուստարվա ընթացքում աշակերտների թիվը փոխվում է, քանի որ երբեմն պատահում է, որ ընտանիքներ են ներգաղթում: Նշենք, որ Եղեգի միջնակարգ դպրոց են հաճախում նաեւ Սեւաքար, Ընկենանց, Չափնի գյուղերի դպրոցահասակ երեխաները, ինչպես նաեւ վեց աշակերտ՝ քաղաքից (դպրոցում աշխատողների երեխաներ):

**«Այս պահին դպրոցում աշխատում է 10 ուսուցիչ, միայն ֆիզիկայի մասնագետի խնդիր կա: Մրցույթը հայտարարված է, բայց դեռեւս դիմող չկա: 3-4 ուսուցիչ ապահովված է ամբողջ դրույքով, բացի ֆիզիկայից, որ 11 ժամ է, ամենաքիչ դասաժամը 13.75 է: Ովքեր դիմում են աշխատանքի համար, հիմնականում դասվար եւ օտար լեզվի մասնագետ են»**, – նշեց տնօրենը:

Արդեն ավելի քան 10 տարի է՝ Հայաստանի կրթության ոլորտում իրականացվում են ուսուցման կոլեկտիվ եղանակի կազմակերպման գործընթացներ: Դեռեւս 90-ական թվականներին ստեղծվեց «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, որի կանոնադրական նպատակը Հայաստանում նոր կրթական համակարգի ստեղծումն է: Ինչպես արդեն հայտնի է, ասոցիացիայի գործունեությունը նպատակուղղված է իրագործելու անցումն այնպիսի կրթական համակարգի, որի համակարգաստեղծ գործընթացների հիմքում ընկած լինեն համագործակցային փոխազդեցություններն ու համագործակցային հարաբերությունները: Արդյունքում բազմաթիվ ուսուցիչներ ուսուցման գործընթացը կազմակերպում են ուսուցման կոլեկտիվ եղանակով, որ իր կայացման ճանապարհին շատ խոչընդոտներ հաղթահարեց եւ դեռ շարունակում է հաղթահարել:

2012-2013 ուստարվա երկրորդ կիսամյակից Սյունիքի մարզի Եղեգի միջնակարգ դպրոցն ուսուցման կոլեկտիվ եղանակը դարձրեց իր գործելաոճը: **«Ուսուցիչների շրջանում անցկացված հարցման օգնությամբ ակնհայտ դարձավ, որ ավանդական դաս-դասարանային համակարգից այդքան էլ դյուրին չէր անցում կատարել ՈՒԿԵ-ին: Մասնավորապես նրանց համար դժվար էր զանազան վերապատրաստումներից հետո ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելը, ինչպես նաեւ չափազանց ժամանակատար էր քարտերի պատրաստումը: Սկզբնական շրջանում որոշակի խոչընդոտներ էին նաեւ դասարանների կոմպլեկտավորումը, աշակերտներին նոր մեթոդներին հարմարեցնելը. չէ՞ որ տարիներ շարունակ նրանք միայն սովորողի դերում էին, իսկ հիմա իրենք պիտի նաեւ սովորեցնողի դեր ստանձնեին»,** – նշեց տնօրենը: Ինչեւէ, շատ խոչընդոտներ արդեն հաղթահարել են, եւ դպրոցը, թեպետ մասամբ, բայց կիրառում է ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը: **«Մենք միայն կիրառում ենք այդ եղանակի մեթոդները, այսինքն՝ որոշակի փուլում ենք: Իրականում այն դպրոցները, որտեղ այդ եղանակով է ուսուցումը կազմակերպվում, այլ կերպ են ֆինանսավորվում եւ գործում, բայց մենք դեռեւս ֆինանսավորվում ենք ինչպես մյուս դպրոցները: Մեզ համար առայժմ առավելություն է այն, որ այս եղանակը հնարավորություն է տալիս դասից բացակայող աշակերտին գալ եւ լրացնել բաց թողածը, ինչպես նաեւ ամբողջ դասաժամին աշակերտի զբաղվածության հարցը լուծել եւ այլն»,** – նշեց Մ.Գանդալյանը:

Բնական է, նախնական շրջանում դժվարություններ կային հատկապես ուսուցիչների համար: Նրանք անընդհատ քարտեր պիտի կազմեին, նոր մեթոդներին հարմարվեին, բայց վերապատրաստումների, դասընթացների, փոխադարձ դասալսումների շնորհիվ շատ դժվարություններ արդեն հետեւում են:

2010թ. հիմնովին կառուցված դպրոցում գույքային խնդիր չկա, մարզադահլիճը, մարզահրապարակը նույնպես ապահովված են համապատասխան միջոցներով: **«Միայն լաբորատորիայի սարքավորումների եւ նյութերի խնդիր ունենք, որ, հուսով եմ, շուտափույթ լուծում կստանա»,** – նշեց տնօրենը:

«Վորլդ վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպությունը «Բարեկեցիկ ընտանիք» ծրագրի շրջանակներում հայտարարել էր «Երեխաների պաշտպանությունը մեր համայնքում» դրամաշնորհային մրցույթ, որի հաղթողներից մեկն էլ Եղեգի միջնակարգ դպրոցն էր, որ ներկայացրել էր համայնքի սոցիալապես անապահով երեխաների համար ամառային ճամբար բացելու ծրագիր: «Արծագանք» բակային ճամբարը մեկնարկել է հունիսի 15-ին եւ տեւել 7 օր, այդ ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել ծանոթանալ երեխաների իրավունքներին, դիտել բնապահպանությանը նվիրված վավերագրական ֆիլմեր, կազմակերպել ինտելեկտուալ եւ մարզական միջոցառումներ, սովորել եւ ներկայացնել քրիստոնեական տա-

էջ 7

# Կայացավ Կապանի N2 ավագ դպրոցի տնօրենի ընտրության մրցույթը

**Օգոստոսի 21-ին անցկացվեց Կապանի N2 ավագ դպրոցի տնօրենի թափուր տեղի համար մրցույթ, որին հայտագրվել էր երկու թեկնածու:**

Թեկնածուներից յուրաքանչյուրը ներկայացրեց դպրոցի հնգամյա զարգացման ծրագիր: Նաիրա Ավանեսյանը մասնավորապես նշեց, որ պետք է քայլեր ձեռնարկել կրկնուսուցումն ավագ դպրոցում վերացնելու, ուսուցիչների պարբերաբար վերապատրաստման, ուսուցչի՝ ուղղորդողի դերում հայտնվելու աշխատանքների ուղղությամբ, ներառական կրթությանը զարկ տալ, ակտիվ համագործակցել համայնքի, տարբեր կազմակերպությունների եւ ծնողների հետ, փորձել հայթայթել լրացուցիչ նյութական միջոցներ՝ դպրոցում որոշ խնդիրներ լուծելու համար: Նա խոսեց նաեւ ծնող-աշակերտ-ուսուցիչ-համայնք՝ այս 4 բաղադրիչների հետ տնօրենի կատարելիք աշխատանքների, աշակերտների մասնագիտական ճիշտ կողմնորոշման, դպրոցը ժամանակակից նյութատեխնիկական բազայով ու հագեցած լաբորատորիաներով համալրելու անհրաժեշտության մասին եւ այլն:

Կապանի N2 ավագ դպրոցի տնօրենի պաշտոնակատար, տնօրենի պաշտոնի հաջորդ հավակնորդ Ռիտա Օվչյանը մանրամասն ներկայացրեց դպրոցի մանկավարժական եւ աշակերտական համակազմի, շենքային պայմանների, 2014-15 ուստարվա ուսման որակի եւ այլնի մասին: Դպրոցի զարգացման հնգամյա ծրագրում նա մասնավորապես անդրադարձավ ավագ դպրոցի առջեւ ծառացած հիմնախնդիրներին, որոնց լուծման համար անհրաժեշտ է ուղիներ փնտրել: Ծրագրում շեշտը հիմնականում դրված էր ուսման որակի բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաներով, լաբորատոր սարքավորումներով եւ նյութերով հագեցվածության, տարբերակված խորացված ուսուցման կազմակերպման, տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության վրա: Ռ.Օվչյանը կարեւորեց նաեւ դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի, ծնողական համալսարանի ստեղծումը, որը կնպաստի դպրոցի վարկանիշի բարձրացմանը, իսկ դա հնարավոր է միայն դպրոցի թափանցիկ գործունեության, փոխադարձ վստահության շնորհիվ: Նա մեծ նշանակություն է տալիս նաեւ դպրոցի ներքին գնահատմանը, ինչը թույլ կտա վերացնել բացթողումները: Քանի որ դպրոցը ֆինանսավորվում է բացառապես պետբյուջեից, որ երբեմն բավարար չէ շատ խնդիրներ լուծելու համար, կարեւոր է նաեւ լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթումը:

Վերոնշյալ եւ մի շարք այլ հարցեր քննարկելուց զատ տնօրենի հավակնորդները պատասխանեցին դպրոցի խորհրդի անդամների հարցերին, որից հետո փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվեց Կապանի N2 ավագ դպրոցի տնօրենը. Ավանեսյան Նաիրա՝ 0, Օվչյան Ռիտա՝ 8 կողմ ձայնով:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«դիրքավորվել» որպես բարձրակարգ ամերիկյան ներդրող, որ ոչ միայն իր հետ բերում է իր ներուժը, ինտելեկտը, ներդրումը, այլեւ ուզում է օրինակ ծառայել մյուս ներդրողներին, նմանատիպ ազդանշաններ տալ մյուսներին:

**– Եվ վերջին հարցը. կուզենայի՞ք ինչ-որ ընդհանրական խոսք ուղղել համակարգի աշխատակիցներին:**

– Ողջունում եմ բոլորին, կուզենայի եւս մեկ անգամ ասել, որ Քոնթուր Գլոբալ ընկերությունը լրջորեն է մոտենում այս ներդրմանը, պատրաստվում է ոչ միայն տեխնիկական ներդրումներ կատարել, այլեւ «ներդրում» կատարել մարդկանց մեջ, նրանց կատարելագործման, մասնագիտական որակները բարելավելու նպատակով, ինչպես նաեւ համայնքի զարգացման մեջ: Կուզենայինք, որ բնակչությունն էլ՝ ոչ միայն Սյունիքում, այլեւ ամբողջ Հայաստանում, ըստ պատշաճի եւ որպես դրական երեւույթ ընկալեր մեր ընկերության մուտքը:

**Հարցազրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

### ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

**Հարգելի՛ պարոն Սուրիկ Խաչատրյան**

Խորին շնորհակալությունս եւ երախտագիտությունս եմ հայտնում Ձեզ՝ կյանքիս այս կարեւորագույն պահին ինձ աջակցելու համար:

Կրթությունը կյանքի հիմքն է, ակունքը, ապագան ու լուսավոր անցյալը: Երբ գիտես կրթության հարգը, արդեն իսկ մարդ ես: Դուք ինձ աջակցեցիք, որպեսզի ես էլ անխառն չմնամ այդ հրաշալի մթնոլորտից, ես էլ մուտք գործեմ մի աշխարհ, որտեղ միայն լուսավորությունն է իշխում:

Ձեր տրամադրած դրամական օգնության շնորհիվ այսօր ես Դիլիջանի միջազգային դպրոցի ուսանող եմ: Կատարվեց երազանքս, ու հիմա, ավելի քան երբեք, պարտավորված պիտի սովորեմ, դառնամ լավագույն ու իր գործն իմացող բժիշկ, ով պետք է կանգնի իր մարզի կողքին ու արժանվույնս հատուցի:

Ուստի իմ երախտագիտությունն եմ հայտնում Ձեզ, Սյունիքի մարզպետարանի աշխատակազմին, կրթության, սպորտի եւ մշակույթի վարչությանը, ովքեր եղան իմ կողքին եւ օգնեցին հասնել բաղձալի երազանքիս: Առանձնակի շնորհակալություն այն վերաբերմունքի համար, որ Դուք տածում եք դեպի կրթությունը, գրագետ ու խելացի մարդը:

**Հարգանքներով՝ ՕՖԵԼՅԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայտարարվում է մրցույթ՝ «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (25 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

**Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝**

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ սեպտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 2-ին ժամը 14:00-ին «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գ. Սյունիք:

**Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 93 32 33 հեռախոսահամարով:**

*Հանքարդյունաբերություն*

# ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Կոմբինատի ղեկավարության միակ նպատակն ամեն գնով առավելագույն շահույթ սպանալն է...»

էջ 1

**– Պարո՛ն Գասպարյան, Ձեր կարծիքը հայցի վերաբերյալ:**

– Անկեղծ ասած հայցին ծանոթ չեմ, քանի որ այն ուղարկվել է իմ փաստացի հաշվառման վայր, իսկ ես այստեղ չեմ եղել դրան ծանոթանալու համար:

**– Ձեր շահերը երեք փաստաբան է ներկայացնում՝ Կարինե Օվչյան, Արշավիր Խալափյան եւ Իրինա Մանուկյան: Ըստ Հայցվորի՝ հոդվածում օգտագործվել են վիրավորանք պարունակող հետեւյալ արտահայտությունները՝ ա) լսիր, ծաղրածու, բ) անալիտիկ մտածողության բացարձակ բացակայություն, թույլ մասնագիտական գիտելիքներ, կոլեկտիվի ղեկավարում՝ հիմնված էմոցիաների եւ սուտ պատրիոտիզմի վրա, այսինքն՝ ոչ մի գործնական հատկանիշ, քեզ համար ենթադրում են միայն մեկ պաշտոն աշխատելու համար՝ «կորպորատիվ երեկույթների կազմակերպման» մենեջերի պաշտոնը, ինչով եւ դու հայտնի ես դարձել լայն հանրությանը քո թիմի հետ ամենշաբաթյա թանկ սպիրտային խմիչքների դեգուստացիաներով՝ տարբեր խմիչք օգտագործելու համար նախատեսված վայրերում, գ) քո «մասնագետներին» միայն մնում է ուղեղն աշխատացնել, եթե նրանք դրանից ունեն, դ) չէ, դու հիմար չես, դու տականք ես, ե) իմ բարի խորհուրդը քեզ՝ անհաջողակ մենեջերին եւ դատարկ խոսացողին՝ փախիր մեր երկրից, զ) դու տականք ես...:**

– Այդ մարդն իրավունք ունի վիրավորվել, բայց ես չեմ հրաժարվում իմ խոսքերից: Հրաչ Զաբրայանը շարունակում է նույն աշխատելաոճով իր գործունեությունը ծավալել՝ կապելով ժողովրդի աչքը: Կարճ ասած ես նորից ստորագրում եմ այդ նամակի տակ:

***– Իսկ ի՞նչ է կատարվում այսօր «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ում:***

– Ես վստահաբար կարող եմ ասել, որ այսօրվա դրությամբ այնտեղ իրականացվում են ոչ ճիշտ տեխնոլոգիական աշխատանքներ: Դեռեւս Ռ.Ֆալետտայի ղեկավարման օրոք ես հայտնաբերել էի, թե հանքանյութի ինչքան կորուստ են տալիս: Դրանք չվերականգնվող պաշարներ են, որոնց կորուստն անդառնալի է: Եթե ես հնարավորություն ունենայի ծանոթանալ կոմբինատի հաշվետվություններին, որոնք ուղարկվում են համապատասխան կառույցներին, կարող էի ասել, թե հատկապես արտադրական շղթայի որ օղակում են նրանք սխալներ թույլ տալիս: Չեմ կասկածում, որ նրանք կատարում են ընտրովի շահագործում (հանքանյութը վերցնում են ամենահարուստ վայրից միայն): Մեծ կորուստ են տալիս նաեւ հանքաքարը զանգվածից պոկելու ընթացքում: Ազգային ունեցվածքին հասցվող վնասը շատ մեծ է, եւ ինձ ամենից շատ վիրավորում է այն, որ Հրաչ Զաբրայանը փորձում է ցույց տալ, որ մեր ազգին օգուտ է տալիս: Նրանց այս պահին հետաքրքրում է միայն ու միայն օգուտ ստանալը, թե հետագա սերունդներին հանքային դաշտում մշակելու հումք ինչքան կմնա, կամ չի մնա, դա իրենց ամենեւին չի հետաքրքրում:

***– Ձեր աշխատելու ժամանակ կոմբինատը քանի՞ աշխատող ուներ եւ տարեկան ինչքա՞ն հանքաքար էր հանում:***

– 1989-90թթ. Կապանի կոմբինատի գլխավոր ճարտարագետն էի, մինչ այդ հանքի վարիչ, եւ այդ ժամանակ մենք Լենհանքերի պղնձի հանքերն էինք շահագործում: Տարեկան 650-750 հազար տոննա հանքաքար էինք հանում եւ ունեինք 750-780 աշխատող, ներկայումս՝ 1200-1300 աշխատող, տարեկան՝ 450-500 հազար տոննա հանքաքար: Ինձ զայրացնում է այն հանգամանքը, որ կոմբինատի տնօրենն անընդհատ կրկնում է, որ իրենք շահույթ չեն ստանում, բայց մոտ 300 աշխատող ավելի են պահում: Պարզաբանում եմ, որ երակային հանքավայրի մշակումն ի սկզբանե պահանջում է քանակով շատ մարդկային ռեսուրսներ, որն ընդունված տեխնոլոգիայի նախանշ է եւ ոչ թե Հրաչի ցանկություն՝ «բարելավել քաղաքի սոցիալական պայմանները»: Ի՞նչ է, շահույթ չունես, քո գրպանի՞ց ես վարձատրում այդ մարդկանց, դա աբսուրդ է (նոնսենս): Այն շահույթը, որ այսօր ունի կոմբինատը, ինչ խոսք, լիովին թույլ կտա եւս 300 մարդ պահել քմահաճույքի համար, քանի որ նրանց վրա ծախսվող գումարները չնչին են ստացվող շահույթի դիմաց: Նշեմ, որ օրենքի համաձայն ստացած շահույթի ընդամենը 20 տոկոսն է փոխանցվում պետբյուջե՝ շահութահարկի տեսքով: Ինչ վերաբերում է հանքաքարի չափին (400-500 հազար տոննա), դա բնական է. այստեղ տեխնիկապես հնարավոր չէ ավելի աշխատուժ եւ սարքավորումներ տեղավորել, եւ ավելի բարձր արտադրանք ապահովել:

***– Ձեր աշխատելու տարիներին ինչքա՞ն էր կոմբինատի շահույթը կազմում:***

– Այդ տարիներին մենք շահույթ չէինք ստանում, քանի որ պղինձը ցածր գին ուներ, մեզ պետությունը դոտացիա էր տալիս: 1990-ական թվականների սկզբին պղինձը, կարելի է ասել, գին չուներ, հետո միանգամից բարձրացավ: Մենք վնասով էինք աշխատում, բայց մոտ 800 աշխատատեղ ունեինք:

***– Ինչպե՞ս է ստացվում, որ 200-300 տարի լինելով հանքարդյունաբերական միջավայր՝ այնուամենայնիվ, կադրերն այսօր դրսից ենք բերում Կապան:***

– Եթե ասեմ, որ մեր կրթական համակարգը պատրաստում է ընտիր կադրեր, մանավանդ ընդունված արեւմտյան կրթահամակարգի պայմաններում, չափազանցություն կլինի, բայց դրսից բերված կադրերն էլ չեն փայլում (ես շփվել եմ առնվազն հինգ հոգու հետ) հանքային ոլորտում իրենց գիտելիքներով եւ հմտությամբ: Տեսական գիտելիքներից առավել մեր բնագավառում կարեւոր է գործնականը, հմտանում են աշխատելու ընթացքում, բայց պիտի սովորեցնող լինի (բոլոր հարցերը չեն լուծի համակարգիչները): Նշեմ, որ երիտասարդների շրջանում նույնպես մեծ խանդավառություն չեմ տեսնում, մեկ-երկու հոգի միայն կարող է լրջությամբ հետաքրքրվել հանքարդյունաբերական աշխատանքով:

***– Ի՞նչ ձեռքբերումներ եք ունեցել Ձեր գործունեության ընթացքում:***

– Քանի որ քննարկում ենք ընկերության հետ կապված հարցեր, ապա նշեմ, իմ գործունեության հինգ ամսվա ընթացքում տարբեր լեռնային ցուցանիշներ երկուսից մինչեւ վեց անգամ բարձրացան: Ավելին ասեմ՝ ես Թեջադինի տեղամասն էի ղեկավարում, որտեղ հիմնականում զբաղվում էինք նախապատրաստական աշխատանքներով եւ 5-րդ ամսում արդեն իսկ կատարեցինք հանքաքարի առաջին պոկումը: Այդ պահին, երբ հնարավոր էր սկսել հանքաքարի 1.5 տարով պլանավորված քանակի թողարկումը, երկու տեղամասը՝ Կենտրոնական եւ Թեջադինը, միացվեցին, եւ ինձ ազատեցին աշխատանքից՝ ասելով, որ անհրաժեշտության դեպքում հետ կկանչեն: Իհարկե, ցավալի էր ինձ համար կատարել մեծ ծավալի նախապատրաստական աշխատանքներ, որը ապահովում էր հանքաքարի հանույթի պլանավորված ծավալների կատարում, ու այն նվիրել մեկ ուրիշի: Աբսուրդ:

**– Տարիներ առաջ Շահումյանի բազմամետաղային հանքի բաց շահագործման գաղափարը մեծ աղմուկ բարձրացրեց, բայց հետո միանգամից դադարեցվեց այդ գործընթացը, որ, իհարկե, դեռ չէր հասցրել մեկնարկել:**

– Գործընթացն իսկապես կասեցվել է ոչ թե պայմանավորված հումանիզմով, այլ նրանով, որ հանքավայրի բաց եղանակով շահագործումն ուղղակի շահույթ չէր ապահովի: Առավել աշխատանքներ պիտի տարվեին այդ ուղղությամբ, որ բնավ իրենց ձեռնտու արդյունք չէր տա:

**– Տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանը որքանո՞վ է նպաստել ընկերությունում օգտագործվող տեխնոլոգիաների արդիականացմանը:**

– Եթե հակիրճ ասեմ, փոխվել են միայն աշխատանքի միջոցները: Նախկինում շատ աշխատանքներ կատարվում էին ձեռքով, ներկայումս մեքենայացված է, որ բնական է, բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, ակնկալում շահույթի մեծացում:

**– Միջազգային շուկայում մետաղների գների առումով ճգնաժամ է արձանագրվում:**

– Անկեղծ ասած վերջերս պարբերաբար չեմ հետեւում գներին, բայց գիտեմ, որ նվազել են:

***– Ժամանակ առ ժամանակ խոսակցություններ են շրջանառվում առ այն, որ Գեղանուշի պոչամբարը սպառել է իր հնարավորությունները: Պարբերաբար խոսում են նաեւ Կապանի օդի աղտոտվածության մասին, որ լուրջ խնդիրներ կարող է առաջացնել մարդկանց կյանքի եւ առողջության համար:***

– Այստեղ պիտի մի կարեւոր հանգամանքի ուշադրություն դարձնենք. մեր ընդերքից հանված հանքաքարից կորզում են միայն ոսկի, արծաթ, ցինկ եւ կապար, մնացած տարրերը թողնում են: Իսկ ընդերքի մասին օրենքի համաձայն՝ հանքավայրը համալիր պիտի շահագործվի: Մենք բարբարոսաբար ենք օգտագործում մեր հանքավայրը. շահագործողների նպատակը միայն շահույթ ստանալն է, մնացածի մասին մտածելն ավելորդ է այս շրջանում, բայց այն հանգամանքը, որ գտնվող զուգակցող մետաղները ոչ մի տեղ չեն երեւում եւ մարվում են առանց որեւիցե օգուտ բերելու հանրությանը, շատ մտահոգիչ է ու անթույլատրելի: Այդ մետաղների մի մասը կարող է չհաշվառված առաքվի խտանյութի հետ, մյուսն արտադրության թափոնների հետ կուտակվի պոչամբարներում:

Դեռեւս երկու տարի առաջ էի լսել, որ Գեղանուշի պոչամբարի հետագա շահագործման հնարավորությունները մոտենում են սահմանագծին: Ինչ վերաբերում է օդի աղտոտվածությանը, ես չեմ կարող միանշանակ պնդել, թե այն լուրջ խնդիրներ է ստեղծում, քանի որ չունեմ շրջակա միջավայրի եւ հատկապես օդային ավազանի վերաբերյալ մասնագիտական տեղեկություն: Բնապահպանության նախարարությունը պիտի տեսչություն ունենա, որ պարբերաբար ստուգի օդի աղտոտվածության աստիճանը:

**– Ամփոփելով զրույցը՝ նկատում ենք, որ Դուք իսկապես մեծ ցավով եք ներկայացնում ստեղծված իրավիճակը:**

– Գիտեք՝ այստեղ անձնական խնդիր չկա, ես Զաբրայանի հետ ընդհանրապես չեմ աշխատել, իմ վրդովմունքն առաջանում է նրա ստախոսությունից եւ փորձից՝ խաբել հասարակությանը՝ օգտվելով նրա անտեղյակությունից եւ ոչ պրոֆեսիոնալ դատումից: Սա իսկապես կլոունադա է, եւ ստիպում է մտածել, թե ինչ էր ուզում ասել կամ անել այս ողորմելին՝ լկտիաբար խաբելով մարդկանց իր ասուլիսներում, իսկ եթե Զաբրայանի պահվածքը ծիծաղ առաջացներ, այդ ժամանակ կնմանվեր իսկական ծաղրածուի: Աստված գիտե. մեկը կարող էր լալ՝ «գիտակցելով ընկերության ծանր վիճակը», ինչ-որ մեկն էլ թքուն կխնդար, որպեսզի դատարանի առաջ չկանգնեցնեն: Ինձ զայրացնում է, որ թալանելով ժողովրդի հարստությունը (մեր ընդերքը) եւ դրանով հարստանալով, չնչին գումարներ հատկացնելով հանրությանն իբր բարեգործություն, այդ Հրաչ կոչվածն անընդհատ մարդկանց գող է անվանում՝ ոտնահարելով նրանց արժանապատվությունը: Իհարկե, կլոունադա է այս ամենը, նույնիսկ այն, որ ես դատարանի առջեւ պետք է կանգնեմ, այլ անվանում ես չեմ կարող տալ: Ես ուզում եմ, որ կապանցու հարստությունը երկար ծառայի սերունդներին, կապանցի մասնագետն աշխատի կոմբինատում (ոչ օտարերկրացու ծառա) եւ խնայողաբար ու համալիր օգտագործի մեր ընդերքի հարստությունը: Ըստ 2009թ. պաշարների վերահաշվարկման՝ Շահումյանի հանքավայրի կյանքը (500 հազ. տոննա տարեկան արտադրողականություն ապահովելու պայմաններում) պետք է կազմի մոտ 28-30 տարի: Հաստատ համոզված եմ, որ այն երբեք չի իրականանա առկա տեխնիկական քաղաքականության դեպքում: Մի գեղեցիկ օր կիրաժարվեն Շահումյանի ծննդավայրից, ինչ նույն հաջողությամբ արել էին Լենինյան հանքերի Կենտրոնական տեղամասի նկատմամբ՝ «մեզ տնտեսապես ձեռնտու չէ շահագործել» ձեւակերպմամբ:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

---

# Ի՞նչ է կատարվում Կապանի լեռնահանքային կոմբինատում

*Վիճակագրություն*

Ամեն անգամ, երբ ՀՀ հարկային ծառայությունը հրապարակում է առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը՝ ըստ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի մեծությունների, փորձում ենք հասկանալ Սյունիքի մարզի տնտեսությունում տեղի ունեցող զարգացումների միտումները:

2015թ. առաջին կիսամյակի արդյունքներն ամփոփող հարկային տեղեկագրից նույնպես կարելի է այդ պատկերացումը կազմել:

Ներկայացված տեղեկագրում, նախեւառաջ, ուշագրավ թվեր ենք տեսնում մարզի հանքարդյունաբերական ձեռնարկություններին առնչվող:

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ում, կարծեք, շրջադարձ է կատարվում. 2015թ. առաջին կիսամյակում վճարվել է մոտ 9,6 մլրդ դրամ հարկ՝ 3,5 մլրդ դրամով ավելի, քան 2014թ. նույն ժամանակամիջոցում: Եվ դա այն դեպքում, երբ գունավոր մետաղների շուկայում գների ցածր նիշը շարունակում է իշխող մնալ: Իհարկե, արձանագրված ցուցանիշը դեռեւս զիջում է 2012-ի եւ 2013-ի համապատասխան ցուցանիշներին, բայց չի կարելի չնկատել առաջին եւ երկրորդ եռամսյակների առաջընթացը:

«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ում եւս կայուն վիճակ է: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում պետությանն է վճարվել մոտ 1,6 մլրդ դրամ հարկ՝ գրեթե նույնքան, որքան 2014-ին (թեեւ հիմնական արտադրանք հանդիսացող պղնձի խտանյութի շուկայում վերջին տարիների կտրվածքով աննախադեպ ցածր գներ են):

Միանգամայն այլ է վիճակը «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ում:

2015թ. առաջին կիսամյակում պետությանն է վճարվել մոտ 1,5 մլրդ դրամ հարկ: Դա մոտ 829 մլն դրամով կամ 35 տոկոսով պակաս է, քան 2014թ. նույն ժամանակամիջոցում վճարվածը:

Կապանի կոմբինատի տնտեսության սրընթաց անկումն ավելի ցայտուն է դառնում, երբ ընթացիկ տարվա առաջ կիսամյակի ցուցանիշը համեմատում ենք 2013 կամ 2012 թվականների նույն ժամանակի տվյալների հետ: Ահավասիկ՝ 2012-ի առաջին կիսամյակում պետական բյուջե է վճարվել մոտ 3,9 մլրդ դրամ հարկ: Ասել է թե՝ 2012թ. առաջին կիսամյակի համեմատությամբ Կապանի կոմբինատը պետությանը պակաս է վճարել մոտ 2,4 մլրդ դրամ: Դա նշանակում է, որ ընկերությունում վերջին երեք տարում տնտեսությունը նահանջել է մոտ 62 տոկոսով:

Այդ ամենից հետո, բնականաբար, հարց է ծագում՝ ի՞նչ է կատարվում Կապանի լեռնահանքային կոմբինատում, որ հիմա կոչվում է «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ:

Միգուցե ընկերության ղեկավար Հրաչ Զաբրայանը պարզաբանի՞ ստեղծված կացությունը:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# ՄԵՐԻ ԳԱՆԴԱԼՅԱՆ. «Դպրոցի հիմնական խնդիրը փարեցփարի աշակերփների թվի նվազումն է»

*Հանրակրթություն*

էջ 5

ղավար տոները, ինչպես նաեւ ծանոթացել հայոց կաթողիկոս Մովսես Տաթեւացու գործունեությանը: Վերջին երկուսի մասին լրացուցիչ տեղեկություններ հաղորդեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը: **«Ճամբարը եզրափակվեց Տաթեւի վանական համալիր այցելությամբ, որ ինքնանպատակ չէր. այդ ընթացքում մասնակիցները եղան Ա.Բակունցի տուն-թանգարանում, այցելեցին Մխիթար Սպարապետի գերեզման եւ Խնձորեսկի ճոճվող կամուրջ: Ճամբարին, բացի դպրոցի աշակերտներից, մասնակցեցին նաեւ տատիկ-պապիկներին քաղաքից այցելության եկած երեխաները»,** – նշեց Մ.Գանդալյանը:

**«Եղեգ համայնքի աշակերտներն ավելի շատ մաթեմատիկական ընդունակություններով են օժտված: Աշակերտների թիվը քիչ է, եւ մենք կարողանում ենք լիարժեք գնահատել բոլորի ընդունակությունները: Եթե մեկն ունի տվյալ առարկայից ընդգծված ունակություններ, մենք անպայման զարգացնում ենք դրանք: Այս տարի առարկայական օլիմպիադաներից մրցանակային տեղ չունեինք, բայց նախորդ տարիներին մարզային փուլում ունեցել ենք: Դպրոցի համար ես դա բացթողում եմ համարում եւ շեշտը դնում եմ հատկապես այդ ուղղությամբ աշխատանքները կատարելագործելու վրա»,** – նշեց տնօրենը:

Քաղաքից բավականին հեռու գտնվելով՝ գյուղաբնակ երեխաները հնարավորություն չունեն հաճախելու մշակութային եւ մարզական տարբեր հաստատություններ, ուստի այդ բացը լրացնում են դպրոցի արտադասարանական խմբակներով: Դպրոցում գործում են թենիսի, շախմատի խմբակներ եւ ազգային պարերի ակումբ: **«Շախմատի խմբակը գործում է դեռեւս այն ժամանակվանից, երբ հանրակրթական դպրոցներում պարտադիր ուսուցման առարկա չէր: Այս տարվա ձեռքբերումներից է այն, որ դպրոցի ներառական կրթությամբ աշակերտը, ով ունի խոսքի զարգացման թերություններ, դպրոցի շախմատի լավագույն խաղացողներից մեկն է ճանաչվել եւ խրախուսվել»,** – տեղեկացրեց տնօրենը:

Մեծ տեղ է հատկացվում նաեւ արտադասարանական միջոցառումներին, որոնց մասնակցում են դպրոցի բոլոր աշակերտները: Ինչպես տնօրենը տեղեկացրեց, դրանք չեն խանգարում ուսման գործընթացին, քանի որ մեկ-երկու օրում չեն կազմակերպվում: Ուստարվա սկզբից ուսուցիչներն արդեն պլանավորում են այդ աշխատանքները՝ համառոտ ներկայացնելով միջոցառման նպատակը, բովանդակությունը: Միջոցառումներին անհամբերությամբ սպասում են նաեւ համայնքի բնակիչները: Դպրոցի տնօրենը հատկապես առանձնացնում է Սբ Մեսրոպ Մաշտոցի 1650-ամյակին, մեծ երգահան Կոմիտասի 145-ամյակին նվիրված միջոցառումները եւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բաց դասախոսությունը Կապանի երկրագիտական թանգարանի հետ համատեղ:

«Վորլդ վիժն»-ից բացի համագործակցում են «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան եւ «Խատուտիկ» կրթական հասարակական կազմակերպությունների հետ: Աշակերտական խորհրդի 10 անդամ եղել է Ծաղկաձորում, որտեղ սովորել են տիկնիկագործություն, ծանոթացել երեխաների իրավունքներին: Կոմիտեն երեխաների իրավունքներին վերաբերող անհրաժեշտ գրականություն է տրամադրել դպրոցին: Դպրոցում գործում է նաեւ «Արձագանք» իրավապաշտպան ակումբը: Այս տարի ակումբի անդամները միացել են «ՄԱԿ-ի բարեկամներ» խմբին եւ մասնակցում են տարբեր մրցույթների: Օնլայն մրցույթներից մեկին մասնակցելով՝ դպրոցի աշակերտուհի Անահիտ Մանասյանը գրավեց առաջին տեղը:

Դպրոցի բնապահպանական ակումբը մասնակցել է բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ տեսաֆիլմերի պատրաստման մրցույթին, որտեղ գրավել է առաջին տեղը՝ որպես մրցանակ ստանալով ֆոտոխցիկ: Համագործակցությունների արդյունքում կահավորեց նաեւ ԱԽ-ի սենյակը:

Հոկտեմբերին՝ ՄԱԿ-ի կազմավորման 70-ամյակին, ինչպես նաեւ ՄԱԿ-ի վեց քարտուղարին նվիրված միջոցառումներ են նախատեսվում անցկացնել: Մեր մարզից խաղաղության մանդատին նվիրված միջոցառումը ներկայացնելու են Եղեգի միջնակարգ դպրոցի աշակերտները: **«Միջոցառումն անցկացնելու ձեւն իրենք են մշակել: Դպրոցի աշակերտները կնախապատրաստվեն այդ միջոցառմանը: Համայնքում միջոցառումն անցկացնելուց հետո աշակերտներն այն կներկայացնեն նաեւ մայրաքաղաքում»,** – տեղեկացրեց Մ.Գանդալյանը:

Ի դեպ, մարզադահլիճը գույքով ապահովելուն եւ նորոգման աշխատանքները վերջնակետին հասցնելուն նպաստեց «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը, որի ծրագրերից մեկի հայտարարած դրամաշնորհային մրցույթի հաղթող ճանաչվեց դպրոցը: Կազմակերպության «Օրրան» բարեգործական ընկերությունը համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին անցյալ տարի տրամադրեց քնապարկեր: Համագործակցությունը շարունակվում է նաեւ այսօր:

Դպրոցի ավանդույթներից է ուսուցիչների եւ աշակերտների տարեկան ներքին գնահատումը: Ամենամսյա աշխատանքներն ամփոփելուց հետո, որոնք միտված են ե՛ւ կրթության որակի բարձրացմանը, ե՛ւ արտադասարանական միջոցառումների կազմակերպմանը, ամեն ուստարվա ավարտին դպրոցն ունենում է տարվա լավագույն ուսուցիչ եւ տարվա լավագույն աշակերտ:

**«Դպրոցի ամենամեծ հաջողությունն է նաեւ համայնքապետարանի հետ սերտ համագործակցությունը: Համայնքի ղեկավար Վյաչեսլավ Մարկոսյանը մշտապես աջակցում է դպրոցին: Իրենց աջակցությամբ անմասն չեն մնում նաեւ Սեւաքարի եւ Չափնիի համայնքապետները: Շատ հետեւողական են նաեւ ծնողները, ովքեր ամեն ամսվա վերջին մասնակցում են դասալսումների, հանդես գալիս նախաձեռնություններով,** – նշեց տնօրենը եւ հավելեց, – **ամեն ինչ անում ենք երեխաների կրթական մակարդակի բարձրացման եւ նրանց առօրյան բովանդակալից դարձնելու համար»:**

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ 87 տարեկան եմ, երկրորդ կարգի հաշմանդամ: Վերջերս վիրահատության եմ ենթարկվել «Շենգավիթ» բժշկական կենտրոնում: Երախտագիտությունս եմ հայտնում վիրաբույժ Լեւոն Գրիգորյանին բարձր արհեստավարժության եւ իմ հանդեպ դրսեւորած ջերմ վերաբերմունքի համար:

**ԱՐԳԵՆ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ**
**Մեղրի քաղաքի բնակիչ**


**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայտարարվում է մրցույթ՝ «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (9.25 դասաժամ, մեկ տարի ժամկետով) ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:**

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշոտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 7-ին ժամը 12:00-ին «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

**Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:**


# Սիսիանում նշվեց Երիտասարդության միջազգային օրը

**1998թ. օգոստոսի 12-ին Լիսաբոնում անցկացված երիտասարդության հարցերով նախարարների համաշխարհային խորհրդաժողովի ժամանակ առաջարկվեց նշել Երիտասարդության օրը: 1999թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ օգոստոսի 12-ը հռչակվեց Երիտասարդության միջազգային օր, իսկ աշխարհում առաջին անգամ պաշտոնապես այն նշվեց 2000թ. օգոստոսի 12-ին:**

Սիսիանում Երիտասարդության օրը մեծ շուքով նշում են արդեն 6-րդ տարին: Միջոցառման մասնակիցների թիվը տարեցտարի ավելանում է: Այս տարի եւս երիտասարդների համար ուրախ ժամանց ապահովելուց, տարաբնույթ խաղեր-մրցույթներ կազմակերպելուց զատ մատուցվեցին արդեն ավանդական դարձած խաշլամա ու հարիսա:

Ամերիկայի Տեխասի նահանգում բնակվող Թոյլեր Յանգը Սիսիանում է որպես զբոսաշրջիկ: Իր երկրում երիտասարդության միջազգային օրը չի նշվում: Նա եւս միացել է 100-ավոր երիտասարդների եւ Շաքեի ջրվեժ հասել: *«Շատ գեղեցիկ ու տպավորիչ միջոցառում է: Շատ կուզենայի, որ մեզ մոտ էլ նմանատիպ միջոցառում կազմակերպվեր: Այն, ինչ ես այստեղ տեսա, անպայման կպատմեմ իմ ընկերներին»*, – ասում է Յանգը:

Մինչ Շաքեի ջրվեժ այցելելը երիտասարդները Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի հետ ծաղիկներ խոնարհեցին Համո Սահյանի արձանին, այնուհետեւ ոտքով հասան մինչեւ Արցախում նահատակված ազատամարտիկների պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու:

Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեր Ընծա քահանա Միրզոյանը հորդորեց՝ սիրեցեք հայրենիքը, ուշադիր ու հարգալից եղեք միմյանց նկատմամբ: Ապա ավելացրեց. *«Աղոթքով առ Աստված մաղթում եմ, որ հոգով ու մարմնով լինեք առողջ, արիասիրտ ու նվիրված հայրենիքին, բարոյական սկզբունքներին, արդարությանը, ճշմարտությանը, ազնվությանը: Մաղթում եմ, որ ձեր կյանքում լինեք իմաստուն, իսկ դրա համար պետք է առաջնորդվեք Աստվածաշնչյան պատգամներով, Ավետարանական Տերունապատվեր, Քրիստոսավանդ պատվիրաններով»:*

Միասնական աղոթք անելուց հետո երիտասարդներն իրենց նպատակների իրականացման եւ Հայաստան աշխարհի խաղաղության համար մոմեր վառեցին:

Շաքեի ջրվեժի հարակից տարածքում Նելլի Արսենյանը ցուցադրում է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված իր լուսանկարչական 15 աշխատանքը: Դրանք ցուցադրվում են արդեն 2-րդ անգամ: *«15 թիվը պատահական չի ընտրված, դա խորհրդանշում է հենց 1915թ.: Լուսանկարները նայելով՝ բոլոր երիտասարդները մեկ անգամ եւս հիշեն ու դառնան պահանջատեր: Այս գաղափարն եմ դրել իմ ցուցահանդեսի հիմքում: Լուսանկարները, որ արվել են տարբեր ժամանակներում, արտացոլում են հայի ցավը, հույսը, սպասումը, կամքը, հավատքը, ապրող, ապրեցնող բարեւը»*, – ասում է Նելլին:

Ժենյա Տեր-Ղուկասյանը մասնակցում է ծաղրանկարների մրցույթին: Ապագա տնտեսագետը համոզված է՝ մտերիմ ընկերուհին, ում ծաղրանկարն է անում, չի վիրավորվի: Երջանկություն երիտասարդության մեջ, այսպիսին է օրվա խորհուրդն աղջկա համար: *«Իմ երջանկությունը գտնում եմ երիտասարդ մարդկանց մեջ, հոգով երիտասարդ: Դրա համար ցանկացած մարդու ծաղրանկար կանեմ, որ այդ մարդն իրեն հոգով երիտասարդ զգա, նույնիսկ մեծերին,* – նշում է աղջիկը: – *Այսօր ուրախ օր է, համոզված եմ՝ նեղացողներ չեն լինի»:*

Ավանդական պարերի ուսուցում, երգի եւ ասմունքի մրցույթ, ինտելեկտուալ խաղ... Երիտասարդների օրը տոնի վերածվեց: Սիսիանի քաղաքապետի խոսքով՝ միջոցառման շրջանակները գնալով ընդլայնվում են: Տարեցտարի ավելի շատ մարդ է մասնակցում, եւ նոր գաղափարներ են առաջ քաշում հենց երիտասարդները: Ակտիվ ու նախաձեռնող երիտասարդությունը յուրաքանչյուր երկրի հզորության գրավականն ու հիմքն է: Առանց մտածող, պատասխանատու եւ նախաձեռնող երիտասարդության անհնար է պատկերացնել վաղվա օրը: *«Իմ նախաձեռնություն արտահայտությունն այլեւս օրակարգից դուրս է: Կայծ էր պետք, որ մեր երիտասարդները ակտիվանային: 2-րդ տարվանից սկսած արդեն երիտասարդներն են նախաձեռնություններով հանդես գալիս: Մինչ օգոստոսի 12-ը հավաքվում ենք եւ մի քանի անգամ քննարկում անելիքներն ու պլանավորում միջոցառումները, - ասում է Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանը: - Այսօր երիտասարդները մեկ անգամ եւս համախմբվեցին Աստծո տաճարի կամարների ներքո, եւ մեկ անգամ եւս այդ 300-400 երիտասարդը համոզվեց, որ իրենք հզոր են իրենց արմատներով, Հայոց եկեղեցիով, իրենց գաղափարներով եւ իրենց միասնականությամբ: Նրանց մաղթում եմ վճռականություն, կամք եւ նպատակասլացություն»:*

Միջոցառմանը մասնակցում էին նաեւ երիտասարդներ Գորիս քաղաքից:

*«Գորիսից Սիսիան ենք եկել երիտասարդների հետ անցկացնելու մեր օրը, շատ ուրախ օր ենք անցկացնում, ինչի համար շնորհակալ ենք հրավիրող կողմին»,* – ասում է Արայիկ Միքայելյանը:

*«Ամեն բան շատ գեղեցիկ էր կազմակերպված: Ինձ առավել շատ դուր է եկել Շաքեի ջրվեժը, շատ տպավորված եմ»,* – նշում է Էրիկ Ավագյանը:

Սիսիանի քաղաքապետարանի՝ այս տարի կազմակերպած Երիտասարդության միջազգային օրվան մասնակցում էին նաեւ տարածաշրջանի մի քանի գյուղական համայնքներ՝ ներկայացնելով իրենց տաղավարները:

Պատվոգրեր ու շնորհակալագրեր՝ միջոցառման կազմակերպիչներին, խաղ-մրցույթներում հաղթած երիտասարդներին:

Երիտասարդության օրն արդեն դիսկոտեկի տեսքով շարունակվեց Սիսիանի Սիսակ Նահապետի անվան հրապարակում: Մինչեւ ուշ երեկո քաղաքի կենտրոնը մարդաշատ էր: Տոնական օրը եզրափակվեց հրավառությամբ:

**ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**



# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղը հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով 2015-2016 ուստարվա հեռակա ուսուցման ընդունելություն հետևյալ մասնագիտություններով**

| Շիֆր | Մասնագիտություն | Քննություններ | | | Տեղերի թիվը | Այդ թվում` | | Ուսման վարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային | | Ոչ մրցութաին | | բզ. | նպ. | |
| 080600 | Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /լեռնամետալուրգիական ճյուղում/ | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** | Հլգ(գ)* | 25 | 3 | - | 360000 |
| 090100 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | Մ(գ) | Ֆ(գ)** | Հլգ(գ)* | 15 | 2 | - | 360000 |
| 130100 | Օգտակար հանածոների հետախուզում և մշակում | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** | Հլգ(գ)* | 15 | 2 | - | 312000 |
| 150100 | Մետալուրգիա և նյութագիտություն | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** | Հլգ(գ)* | 15 | 2 | - | 312000 |
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** | Հլգ(գ)* | 15 | 2 | - | 312000 |
| 270100 | Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ)** կամ Մ(գ)** | Հլգ(գ)* | 15 | 2 | - | 312000 |

Մ – մաթեմատիկա, Ֆ – ֆիզիկա, Հլգ – հայոց լեզու և հայ գրականություն, Օլ – օտար լեզու (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն):

* -ով նշված ոչ մրցութային գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

**-ով նշված առարկաների համար` թափուր տեղեր առաջանալու դեպքում, այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի` այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում` տարեկան գնահատականը:

Մասնաճյուղ վճարովի մրցութային հիմունքներով հեռակա ուսուցմամբ կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական եւ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք` առանց տարիքի սահմանափակման:

## Դիմորդներին փրվող արփոնությունները

ա) Նշված կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) իրավունքից`

- 1-ին ու 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները, համաձայն բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության.
- առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան երեխաները:

բ) Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից, պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս, ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները` համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:

## Փաստաթղթերի ընդունումը.

**Դիմորդը ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ընդունող հանձնաժողովին ներկայացնում է**

1) դիմում,
2) միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական եւ մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթղթի բնօրինակը,
3) 6 լուսանկար (3x4 չափսի),
4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),
5) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից` ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),
6) զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
7) ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին եւ 2-րդ խմբի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաեւ զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի (մինչեւ 23 տարեկան) մնացած լինելու մասին),
8) միջազգային եւ հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոների) դիպլոմները,
9) «Ֆիզիկա» եւ «Մաթեմատիկա» առարկաների ուժի մեջ գտնվող միասնական քննությունների վկայագիր,
10) տվյալ մասնագիտությամբ աշխատելու դեպքում` տեղեկանք աշխատանքի վայրից:

Փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 դրամ փաստաթղթերի ընդունման եւ ձեւակերպման համար: Քննությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Անկախ քննությանը մասնակցելուց եւ արդյունքից` քննության համար վճարված գումարը չի վերադարձվում:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2015թ. սեպտեմբերի 20-ը` յուրաքանչյուր օր (բացի կիրակի) ժամը 10:00-ից մինչեւ 17:00-ն:

ք. Կապան, Բաղաբերդ 28, Հեռ. (0285) 5-34-61, (0285) 5-46-80, 094708019:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ընդունող հանձնաժողով**

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

# Մեր արեւ ուսուցիչը



Մեծություններ կան, որոնց արժեքն ու էությունը խորությամբ գիտակցել չենք կարող. նրանք անեզր են, անափ... Բավարար է եւ այն, որ նրանք գոյություն ունեն, լուսավորում ու ջերմացնում են մեր հոգիները: Նրանց երբեք հնարավոր չէ ամբողջապես ընկալել, զգալ եւ ներկայանալի դարձնել, ինչպես անհնար է տիեզերքը տեղավորել, ասենք, սափորի մեջ: Գիտեք, դրա կարիքը նույնիսկ չկա.նրանք ճանաչված են իրենց առաքինությամբ ու բարեպաշտությամբ, ինչպես արեւը...

Մեր Արեւն էր նա` մեր սիրելի ուսուցիչ Գրետա Հայրապետյանը...

Արդեն մի քանի օր է` կյանքից հեռացավ բազմավաստակ ուսուցչուհի Գ.Հայրապետյանը. ավարտվեց, ավա՜ղ, երկրային ուղին մի լուսավոր հոգու, ով աշխարհ էր եկել ուսուցանելու հայ լեզուն, կրթելու հայ միտքը:

Կարծես ամառային պայծառ օրը միանգամից մթնեց, երբ լսեցի նրա մահվան բոթը... աշխարհում արեւը պակասեց: Աչքիս առաջ հայտնվեց նրա վեհ, հպարտ, պայծառ ու խելացի կերպարը: Մի անբացատրելի կարոտ ինձ տարավ այն դասարանը, որտեղ մենք առաջին անգամ հանդիպեցինք, եւ նա մեզ ողջունեց իր ոսկեղենիկ հայերենով:

Ծնվել է 1937թ., Մեղրի քաղաքում, որտեղ եւ անցել են նրա մանկությունն ու պատանեկությունը: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է մանկավարժական ինստիտուտում եւ, ավարտելով այն, ստացել հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի (բանասերի) որակավորում:

Դեռեւս երիտասարդ տարիքից է սկսել իր մանկավարժական գործունեությունը` հետագա ամբողջ կյանքը նվիրելով մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վեհ գործին: Մեծ գիտելիքների տեր եւ մանկավարժական բնատուր ձիրքով օժտված երիտասարդ մասնագետն աշխատանքի առաջին իսկ տարիներից արդեն ճանաչված ուսուցիչ էր, ով հայտնի էր դարձել իր անթերի աշխատանքով, ուսուցանելու մեծ տաղանդով եւ, որ ամենակարեւորն է, իր հիանալի աշակերտներով: Եվ պատահական չէ, որ Գ.Հայրապետյանի մանկավարժական հարուստ եւ բովանդակալից գործունեությունը տարածականորեն ընդգրկում է Մեղրու շրջանի գրեթե բոլոր դպրոցները` որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի, մեթոդ-մասնախմբի ղեկավար, կազմակերպիչ, ուսմասվար (Ագարակի դպրոցում, մոտ 15 տարի), տնօրեն եւ Մեղրու ժողովրդական կրթության բաժնում հայոց լեզվի եւ գրականության տեսուչ:

Իր մանկավարժական աշխատանքի մոտ հիսուն տարիները համեմված էին նաեւ գրական-գեղարվեստական հարուստ գործունեությամբ: Նա մի շարք հոդվածների, նամակների հեղինակ է, թղթակցել է կրթական թերթերի, հանդեսների:

Աշխատանքային երկարատեւ տարիների ընթացքում Գրետա Հայրապետյանը գնահատվեց բոլորի կողմից, բազմիցս արժանացավ պարգեւների, շնորհակալագրերի, խրախուսանքների, պատվոգրերի եւ միշտ մնաց ազնվագույն ուսուցչի կերպարին համապատասխան:

Նա մե՜ծ ուսուցիչ էր եւ կհիշվի ու կսիրվի հավերժ:

Իմ սիրելի ու թանկագին ուսուցչուհի... երբեք չեմ մոռանա Ձեզ: Այն ամենին, ինչին հասել եմ, ձեր ներդրած ավանդի շնորհիվ է, որը ե՛ւ մեծ է, ե՛ւ անչափելի: Միշտ իմ հուշերում կլինեք: Եվ երբ կվհատվեմ, կթերթեմ ձեր տված դասերը, կկարդամ ուղղած տողերն ու մտովի կհիշեմ մեր հանդիպումները, զրույցները... ցավալի է ընդունել Ձեր ֆիզիկական չգոյությունը...

Միակ մխիթարությունս թերեւս այն է, որ այս աշխարհում ինձ բախտ էր վիճակված աշակերտը լինել լուսավոր մի մանկավարժի ու մարդու, ով անհատնում գիտելիքների հետ նաեւ իր հոգին էր դնում վարած դասերի մեջ... Մասնագետ, որ ոչ միայն հայ, այլ նաեւ համաշխարհային գրականության հմուտ գիտակ էր ու անխոնջ ուսուցիչը` մշտապես խստապահանջ եւ համբերատար, բացառապես անզիջում, ոգեւորող, լուսեղ...

Այդպես էլ կմնաք մեր հիշողության մեջ` վեհ, բարի, հեզ, հոգատար, հավերժ մեր ուսուցչուհի ընկեր Հայրապետյան:

Թող երկնքում Ձեր անցնելիք ճանապարհը լուսավոր լինի:

**Ձեր աշակերտներ` Մարիամ Մարտիրոսյան, Ալեն Ավետիսյան**
**Շվանիձորի միջնակարգ դպրոց**

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր`
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե` Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.` **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ` syuniacyerkir@mail.ru
էլ.կայք` www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը` 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն` ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն` տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը` 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը` 1700, գինը` 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 03.09.2015թ.: